Hon. Rédaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistengasse

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԱՄՈՒԼ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԳ[illegible]ԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻ ՏԱՐԻ

1894

ԹԻՒ 6 ԱՊՐԻԼ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԶՄԻՒՐՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Գերմանք	161	ԽՄԲ.
Դամբանային Տպաւորութիւններ	166	ԳՐ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
Մատամ Ատելիճա Փարի ի Շիքակօ	170	Ն. Ց. ԳԱՍԱՊԵԱՆ
Մխիթարական Թուղք	173	ՔԱՍԻՄ
Իւր կենդանագիրը	178	Պ. Խ. ԹԷՐԶԵԱՆ
Աղաւնիներ	179	Մ. ՎԱՐՈՒԵՏԵԱՆ
Պատասխան մը	180	Տ. ԶՈՒԳԱՍԸԶԵԱՆ
Արդի Նշանաւոր Երաժիշտները	182	Հ.
Թղթակցութիւն	185	ՇԱՇՆՈՒՐ
Բարեգործական եւ Կրթական	189	Հ. Մ.
Լրաբեր	191	ԽՄԲ.
Քաննիճգամեայ Տեղեկագիր Հայ Ընթերցատան Զմիւռնիոյ, 1869–94	193	Տ. ԽՈՐՇՈՒՐԴ

ԱԶԴ

Ան՛ց բաժանորդներն որ Ա. ՄԱՄՂՈՅ *թիւերն ժամանակին կամ բնաւ չեն ստանար, կ՚ինդրուի որ հաճին անմիջապէս յայտնել Խմբագրութեանս. հակառակ պարագայի մէջ, ո և է դանգատ անընդունելի ու անլսելի պիտի նկատուի։*

Ս. ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿԷՐՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

Սոյն հանրաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին զանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն իզմիրի ամեն հասարակութեանց համարումն, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քաջ գնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան դժալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ մնացած և սոյն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ։ Ինչպէս յարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով վստահել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուին՝

Ա.ա – Ե՛ՐՎՆԻ ԿՈՂՆԱԿԻ ՀՈՂՅԻՆ ՏԵՅ ՀՆԴԻՐ ԼԱՒԻ ՈՂԻՆ։

Ընտանք որ կ՚փափաքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցուած տեսնել, կ՚ինդրուին որ երկերկու օրինակ խմբագրութեանս հասցնեն։

ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆԿՖՈՐԹ

Դրամագլուխ ֆր. **6,250,000** Պահեստի դրամ **1,270,312** ֆր.

Ընկերութիւնս կ՚ապահովագրէ չոգենաւով ուղարկելի ամեն ապրանք, ինչպէս և դրամածրար, ևայլն դիւրամատչելի պայմաններով։

Գնոց և այլ ամեն տեղեկութեանց համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և շրջակայից՝ Վէրճան Ֆէրհանէ,

ՅԱԿՈԲ Գ. ՎԷՄԵԱՆ

— Բարև, բարեկամ, ո՞րկից կուգաս այդպէս խնդուժերես։

— Հէ՛, հէ՛, ինձ յանձնարարած դերձակէդ։

Ես որ յետին ծայր բիբիկ եմ, դիտես, գանգատելու բնաւ տեղի չունիմ այս անգամ։

Դեռ հիմա վրաս ըրաւ առաջին փորձը որ և վերջինը պիտի ըլլայ, որովհետև աքանչելի կերպով յաջողած է։ Եւ որքան որ վերեւքի սանդուխը ոլոր մոլոր է և վայրը քիչ մը նեղուած, ես միշտ պիտի երթամ Պօղոս Աբրահամեանի և կը խրատեմ բոլոր Իզմիրցի եղբայրներուս որ դիմեն ՄԻՇՏ

ՊՕՂՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻՆ

Օսման Զատէ խան, վերի յարկ, 37, Բեզեսթանլըքըլար Պուէ

վ. ՍԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։
Ամենաընտիր կազմ, Նուագատետրներու և Տումարներու

ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐ

17, Պոբպաբեսթօ խան, Ֆրանկոյ Քուչ

ԱՆԿԼՕ–ԻՍԹԸՐՆ

ՔՕ–ՕԲԼՐԱԹԻՑ ՔՕՄԲԱՆԻ, ԼԻՄԻԹԸՑ

Ֆրանկոյ ընդ

Պատիւ ունինք ծանուցանել մեր Պատ. Ցամախորդներուն և Արդ. Հասարակութեան թէ՝ անցեալ Չորեքշաբթի օրուանէ, 16/28 Մարտ, սկսեալ ի վաճառ դրած ենք ղեղչել էֆներով Նախկին ՔՕՆԹՈՒԱՐ ԲԱՐԻՋԻՆԵՔ մնացած տնային այլ և այլ առարկաներ, ինչպէս՝ սաներ, ջրամաններ, տապակներ, սեղանի ճիւնապակեայ սպասներ, թէյի սպասներ, ևն, ևն և մեր ուտեստի ճիւղին մի քանի առարկաները, ինչպէս՝ պահածոյք, աղկերք, մանանեխ, ընդրչինք, ևն, ևն:

Նաև պիտի չարունակուի մետաքսեղէնի, բրդեղէնի և բամպակեայ կտաւեղէններու վաճառահանդէսը, որպէս զի առաւուան եղանակի յատուկ գալիք նոր ապրանքներու պեղ պատրաստուի:

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

L'UNION

(L'UNION)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ՀԻՄՆԵԱԼ 1828 Ի Ն

Ընկերական Դրամագլուխ և Պահեստի Ֆր. **82,000,000**

ԻԻՆԻՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սակագինէն 30էն 50 0/0 զեղչ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմաթիւ յաճախորդներուն և արդ. հասարակութեան թէ պատրաստ է ընդհակ յաւելուածական 20 0/0 զեղչ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'ստանան իրենց սովորական 30 0/0 զեղչը ընելէ յետոյ:

ԺԱՆ Բ. ՊՕՍՔՕՎԻՉ
JEAN P. BOSCOWICH

Ընդհանուր Գործակալ Ամերիկայի

ԲՕԼԷՄՈՍԻ

(Ο ΠΟΛΕΜΟΣ)

ՎԱՃԱՌԱՏԱՆ ՄԼՈՂ ՋԱՏԿԱՆԱՆ ՆՈՒԻՐՆԵՐ

Բօլէմոսի մեծ մրերանոյներու վարչութիւնը ուղելով Ազգդ Հասարակութեան յայտնել իւր երախտագիտութիւնըև հաճելի ըլլալ անոր, քանի որ վերջին մեծ վաճառահանդէսի ժամանակ առաջնութեան և գոհունակութեան այնչափ ապացոյցներ տուած էր, Ջատկի տօնին առթիւ պիտի կազմակերպէ նոր վաճառահանդէս մը

ԻՐԱԿԱՆ ՄԵԾ ՋԵՂՋԵՐՈՎ

Ա յս արտակարգ վաճառումը կը վերաբերի միայն հետևեալ դարակներուն։

Դարակ եղանակին վերաբերեալ բուրդէ և մետաքսէ շրջազգեստոյս կերպասեղենոյ՝ իրենց կառնիթիւրներով։ Դարակ՝ երկաթէ և պղնձէ մանր վաճառքներու, որ կը պարունակէ արդուզարդի վերաբերեալ բազմաթիւ առարկաներ, ինչպէս ժանեակ, ժապաւէն, սեղմերան (ֆօրֆէ) ծաղիկներ, հովհարներ, հովանոցներ և։ Դարակ՝ գլխադակներու, ֆլանել շապիկներու, գուլպաներու, կտաւէ անձեռոցներու, շապիկներու, վոդկաներու և։ Դարակ՝ կարասեայ յատուկ կերպասներու, ինչպէս բէվիս, դամասկեան կտաւ և։ Դարակ՝ եղանակին վերաբերեալ հնդկական կերպասեայ և ուրիշ բամպակէ ապրանքներու։ Դարակ՝ ճերմակեղինայ, ինչպէս իրլանտական կտաւներ, պաթիսթա, դալիգօ, վարադոյր և։ Դարակ՝ զգեստեղինայ, այսինքն եղանակին յարմար տղայոց հագուստներ՝ թաղիքէ կամ յարդէ պատրաստ վերջոյրներով, պլուզա տիկնանոյ համար և։ Դարակ՝ կանանց, էրիկ մարդոց և տղայոց վերաբերեալ կօշիկներու։ Դարակ՝ կանանց յատուկ զարդարուած կամ պարզ յարդէ, թուլիէ և վերջոյրներու, որք չինուած են վարիդեան ձևով։ Դարակ՝ դերձակատան եղանակին պատրաստ ֆրանսական և անգլիական կերպասներով, որոյմէ չափի վրայ ձևել կ'ուսանք էրիկ մարդոց հագուստները 60 % ժամն դինով, որոնք երաշխաւորեալ են իրենց տևողութեան և վայելչութեան կողմանէ։ Դարակ՝ կարոններու որք վերջնականապէս ի վաճառ հանուած են և կը ծախուին գրեթէ ոչինչ դիներով։

Ժ. Մ. ԴՕՆՏՈՒԼԻՄ ևի ԸՆԿ.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ԶԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԻՈՐ

Հայոց Ընդ, Բէշիկթէշ Ճաթրպէ

Ամեն տեսակ դեղերու մեծ խնամքը պատրաստութիւն

Ձափաւոր գիներ

Գաւառներէ եկած հիւանդներու ամեն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկները կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ գաւառները կը ղրկուին։

ՄԵԾ ՆՊԱՐԱՏԱՁՈՒԱԾՈՒ

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Հայոց Մեծ Ընդ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անոյշին ամեն տեսակ պարէն, ինչպէս՝ ալիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խահուէ, ձէթ, մոքարօնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիսքուիթներ, անուշեղէններ, գինի, քօնեակ, և այլն, և այլն և ամեն ինչ որոց պէտքը ղգալի է ամեն տան և մանաւորաբար խոհանոցի մէջ։

Խիստ ժամն և ամեն մրցումէ արհամարհող գիները։

LIBRAIRIE FRANÇAISE & ANGLAISE

Կէս-ծալէսի Ճրանկոց Ընդ Տօր

Ա. ու Ծախ Ճրանսերէն և Անգլիերէն Գրքերու։

1500 Հատորէ աւելի գրքեր վարձու կը տրուին։

Նաև կազմատուն ամեն տեսակ կազմերու՝ ջափաւոր գիներով։

Ո և է տեղեկութեան համար դիմել առ

ՊՐՆ. ԿԱՏՊԷՆ

Ամեն անոնք կ'փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր դիներով՝ կազմեալ դրքեր ունենալ Թող դիմեն, 1857ի իվեր հաստատեալ, Եվանկելիքօն Յունաց գպրոցին անցքին մէջ թիւ 8

ԱՌ

ԱԹԱՆԱՍ ԱՆԿԵԼԻՏԻՍ

Պ· ՅՈՎՍԵՓԵԱՆ

ԳՈՐԾԱՏՈՒՆ

Հայոց դէմ ֆոլղոլը, Բէյնթէ ճադդէն, ԹԻ– 106

Սոյն տեղական գործատունս, որուդաց վերաբերեալ կաշխէ, ձգախէժէ և թէ՛ լաթէ ամէն տեսակ պէտքերու լաւագոյնը չինելու պատիւն ունի· ամենասղնիւ որսորդ մը իր քմահաճոյիցը համեմատ ո և է խնդրանքի մը անմիջական պատրաստութեամբը մեծ գիւրութիւն պիտի գտնէ· Գաւառներէ ո և է խնդրանք կամ յուշակ ամենայն ճշդութեամբ կը ղրկուի· Մեր ձեռաց արտադրութիւնը ըլլալով ունինք նաև ճամբորդաց մեծ ու փոքր անասուններ, կանանց, գպրոցականաց, փաստաբանաց, գրագրաց, բաղաքենաց, ծխմայրերու զանազան պայուսակներ, դրամի և սիկարէթի դրամապանակներ, թղթապանակ, զանազան գօտիներ, կապերտ պայուսակներ, և այլն, և այլն·

Ցոյս մեծ ունիմ թէ, Ցարգելի Ազգայիցիս՝ հայ գործատուն մը բացալերելու ազնիւ զգացմամբ՝ իրենց պէտքը մեզմէ գոհացնելու պիտի բարեհաճին·

ՆՈՐ ՓԵՐԱԿԱՆ ՓՐԱՆՍԵՐԷՆԻ, յօրինեց Օր· ՍԱԹԻՆԻԿ ՀԱԼԷՊԼԵԱՆ, ի պէտս ազգային վարժարանաց· Գին 2 ղրշ· տպագր· Պաղտատ· Լեան· Կեդրոնատեղին Սմիրնա Գաւէեան, Գաղտաքէր խան, Պաճէ-Քափու, կ· Պոլիս·

ԳՐԱՑՈՒՑԱԿ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ կազմեց Վ·Ա·ՀԱՆ Գ· ՋԱՐԴԱՐԵԱՆ Ա· Տարի 1893, Գին 10 ղրշ· Հրատարակած է Յունվարի տետրն ևս պատկերազարդ, Տարեան բաժանորդագրութիւնն է, 10 ղրշ· փոստ-ծախքով 12· Հատը 1 ղրշ· իսկ վարժարանաց և Գրավաճառաց ձրի կը տրուի·

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Ջանազան կաշիներէ, ինչպէս՝ ոչէ ոչէ, Ռիւսիէն, Վիտել, ըռոպէն, սափէն և ամուռուան համար գունաւոր կաշիներ։

Ոտնամաններու գինը պիտի որոշուի հագնողին ոտքին թուոյն համեմատ։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր Պատ. Յաճախորդներուն և Աղգով Հասարակութեան, որովհետև՝ այս դրութեամբ՝ 0/0 10-15 ՆՈՒԱԶ պիտի վճարեն։

ԳՆԵՑՈՒՑ

Թիւ 40 ի 48 — Մէկուէ 33 ի

Կօշիկ Նօպուկ կրկնաներբան	Թիւը	զրշ	7
Կօշիկ Ռիւ »	»	»	6
Պօթ Լաճլոռ և Լոռոռ	»	»	3 25
Բօթին ու սուկաւոր (մանթարլը)	»	»	2 75
Պլուքէղ ու » »	»	»	2 75
Կէս պլուքէղ և կէս պօթ	»	»	2 50
Ակարբին	»	»	2 37 1/2
Բօթին Տուտ	»	»	3 75

Մխաներբանը վերի ցուցակին գիներէն 1/4 մէճիտ պակաս։
Ոտնամաններ ի Տարկին 24 ժամէ կը յանձնուին,
Աժնութիւն, դիմացկունութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Այլ եօթէ եկեղեցւոյն Դէմ դրան մօտ, Թիւ 47

ԱՄՃԱ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԻՒԵՐԻՆԷ ի ՀԱՅ Յօրինեց Վ. Ց. ՅԱԿՈԲԵԱՆ, Ամբողջ գործը փոխանակ 35ի որ խոստացուած էր՝ 45-47 Թերթ պիտի լինի։ Բաժանորդագինն է պարզ կազմ 30 զրշ. լաթ. 35, կիսակաշի 40։ Օտար երկրաց համար 7 և 8 ֆր. լրանալէ յետոյ 40, 45 և 50 փոստին ծախքը գնողին վրայ լինելով։ Փափաքողք պարտին դիմել Հրատարակչին, Զ. Թորոսեանի Պոլիս, Պահճէ-Գարու, նոր բոստին դէմ, Թիւ 4, ուր է միակ կեդրոնատեղին։ Ա. Թերթն ձրի իրը նմուշ կը տրուի։ Հրատարակուած է 35րդ Թերթն։ Բաժանորդագրութիւնն ի մօտ կը փակուի երբ 40րդ Թերթը հրատարակուի։

Գրպանի Բառարան ՀԱՅ. ՓՐԱՆՍԵՐԷՆ (25000 բառ.) Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԻ Հրատարակիչ Զարեհ Թորոսեան. Տպագր. Ց. Մատթէոսեան — Գին պարզ 15, լաթակազմ 17 1/2, կիսակաշի 20։

ՀԱՅԿ ԶԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱԿՆԵՐՈՒ

Գալ. – Իէ, Ը– 4, 12 և 14

Կը ծախուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, փետրէ և վերէ։

Ապպրանքի վրայ մեծ հոգածութեամբ կը պատրաստուին ղարդարուն վերմակներ հարսանեկան անկողնի համար։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ԵՐԱԽԱՅՐԻՔ, բանաստեղծական և թատերական տրձակ և տաղաչափեալ գրուածոց — Գրեց Գ. Մ ՏԻՒՄԻՉԵԱՆ, Հրատարակիչ Պ. Պալենց և Պօղոս. Զաքմակճեար, Թիւ 20. Բաժանորդագին 5 դրշ. Յետ տպագրութեան 7 50։

ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ՄԱՄՈՒԼԵԱՆ

Այն Տպագրատան մէջ կը տպուին զանազան գրութիւններ, գիրք, տեղեկագիր, հաշուեգիր, տոմսակներ, և այլն և այլն։

Այնպիսի գործեր տպել տալու պէտք ունեցող ազգայինք կը հրաւիրուին դիմել Մամուլեան Տպագրատունն և անտարակոյս գոհ պիտի ըլլան թէ տպագրութեան մաքրութեան և կանոնաւորութեան, թէ՛ թղթի ընտրութեան և դիւրաւոր աննման չափաւորութեան մասին։

Մամուլեան Տպագրատունն կը գտնուի Ս. Մեսրոպեան վարժարանի կից։

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԿՈՉ. ՏԱՐԻ

ԹԻՒ 6 1 ԱՊՐԻԼ 1894

ԳԵՐՄԱՆՔ

Ընկերբանական որոշ եղանակ մ'է ժողովրդեան մը կենցաղական, մտային և գործնական ուղղութենէ հնաւանելու Նոյն ժողովրդեան վիճակը բարեշրջութեան աստիճանին վրայ։ Միայն այդ եղանակն՝ ո և է մարդկային խմբի կամ ընկերութեան մը նկատմամբ ի գործ դնելու համար՝ անհրաժեշտ է վիճակագրական ստոյգ տեղեկութեանց վրայ հիմնել։ Իսկ երբ ժողովուրդ մը, օրինակի համար, հայոց պէս, զանազան հատուածներու բաժնուած է՝ տարբեր օրինաց, տարբեր սովորութեանց, տարբեր բարուց ենթակայ լինելէ զատ՝ մէն մի հատուած ղուրկ կ'գանուի նաև իր կացութեան յատուկ այն ամէն ծանօթութիւններէ որոց ամբողջութենէ կարելի է ընդ-

հանուր եղրակացութեան մը հասնիլ, այն ժամանակ, չըսեենք անհնարին, շատ դժուարին է վստահութեամբ և ճշմարտութիւնը վեր հանելու տրամադրութեամբ խօսիլ այդ ժողովրդեան նիւթական, մտային և բարոյական դըրութեան վրայ։

Անտարակոյս՝ կան ժողովուրդներ որ, ինչպէս հայն, ունին հանրային քաղաքակրթութեան աստիճանին վրայ դիրք մ'որ դէթ գրական ու կրօնական կապերու վերադրելի է, անտարակոյս՝ հայ ժողովրդեան բարոյական յարաբերութեանց հիմերն, ինչպէս հին նոյնպէս նոր հիմնարկութեանց վրայ հաստատուած՝ եապէս լեղուի և եկեղեցւոյ համակերպութեան մէջ կ'թուին դտնել իրենց ղօրութիւնն, սակայն ժամանակի, միջավայրի, քաղաքակրթութեան ու այլ և այլ բնական ու դրական ներդործութեանց ներքև այնքան փոփոխութիւններ կրնան կրել անյեղլի կարծուած նոյն իսկ նուիրական ու աւանդական կարգ ու սահմանք, նամանաւանդ երբ այդ կարգաց ու սահմանաց աւանդապահներն ամեն կողմէ արշաւող հոսանաց առջև անփոյթ և անղգայ մնան, որ ընկերութեան մէջ երբեմն որոշ դոյն ու նկարագիր ունեցող ինչպէս անհատներ նոյնպէս մարդկային խումբեր կ'այլակերպին և իրենց յատկանիշներն ի սպառ կ'անհետին։ Թէ այդ տոհմային այլափոխութիւնն՝ արդի լուսաւորութեան և յառաջդիմութեան տեսակէտով, բարերշէական կրնայ լինիլ թէ ոչ մեզ արուած չէ դուշակել, բաւ է միայն ըսել, որ ամեն ժողովուրդ՝ որքան անձուկ լինի իր գործունէութեան շրջանակն, աշխարհի մէջ մըրկաւէտ դեր մը կատարելու տահմանուած կ'համարուի, ցորչափ անվթար պահելով իր բնիկ յատկութիւններն, մարդկային աղդի զարգացման իր տահմանին մէջ օժանդակ դտնուելու և համաշդային ներդաշնակութեան մէջ հանրօգուտ պաշտօն մը կատարելու դուն դործէ։

Եւ տես, եւրոպայի ժողովուրդներն, մեծ ու փոքր, ղօրաւոր ու տկար, որ իրենէ անտի՛ մին իր կարողութեան չափով, ստատր դանելով յառաջդիմութեան, ոչ

միայն աշխարհի այս փոքրիկ մասին, այլ և բոլոր մարդկութեան վրայ լուսաւորութեան և բարօրութեան բազմաղան օգուտներ սփռած են և կ՚սփռեն անդուլ, փոքը առ փոքր՝ վայրենութենէ ի քաղաքակրթութիւն բերելով մարդկային հեռաբնակ հրոսակները, որ ոչ ապրելու, ոչ խորհելու և ոչ գործելու միջոցները գիտէին, միջոցներ՝ որով կարելի եղաւ նիւթական թագուն գանձեր երևան հանել և աղգերու ընդհանուր հարստութեանց վրայ բարդել։

Եւ այդ եւրոպական աղգերու մէջ խորին ուշադրութեան արժանի է գերմանական ժողովրդոյ դերն քաղաքակրթութեան գործին մէջ, դեր մ՚որ ի սկզբան գրեթէ աննշան՝ հետզհետէ կ՚աճի, կ՚զօրանայ և ի վերջէ իր այլ և այլ ցեղային անջատ տարրներու միացմամբ՝ արդի եւրոպական ազանց մէջ գերակշիռ ոյժ մը կ՚ստանայ։ Այս գերակշռութեան չարժառիթները, թող արտաքիններն, էապէս պարտ է վերադրել տոհմային բնիկ կարողութեանց մէջ, գերմանական տոկուն բնաւորութեան, աննկուն յարատևութեան, անվհատ չարքաշութեան և մանաւանդ պէս այն քննադատական ոգւոյն մէջ որ իրայ խորը թափանցել կ՚սիրէ և հիմնական սկզբունք և հրահանգ հանել՝ յօդուտ բարոյական, դործնական և ճարտարական կենաց։

Եւ այդ կեանքն ու անոր զարգացման այլ և այլ պարագաներն երևան հանելու համար, պատմաբանին կարևոր են ոչ միայն ատուգ ապատում վիճակագրական տեղեկութիւնները, այլ և բազդատական ընկերբանութեան դիտութիւնն որով կարող լինի ուսումնասիրած ժողովրդեան կենաց պատկերն ըստ կարի բնագրին նմանցնել և յետաքնայ ժողովրդոյ իբրև օրինակ ընծայել։ Այսպիսի ուսումնասիրութիւն մ՚սիւած է ընել անգլիական թերթ մը՝ ձեռնհաս դրչի մը ձեռօք, ի հանդէս հանելով եւրոպական ժողովրդոց կացութիւնն դործունէութեան և ճարտարութեան զանազան ճիւղերու մէջ։ Ա՛ս այժմ գերմանական մեծ աղգին նկատմամբ յօրինուած պատկերն ի նկատի առնելով՝ իրեւ ամենէ չահե-

կանն, յարմար կ'համարինք այդ պատկերին դվսաւոր դծերն ներկայել մեր ընթերցողներուն։

Բ

Գերմանիա եւրոպական աղգերու մէջ առաջնակարգ դիրք մ'ունի և իր ներգործութիւնն անոնց վրայ ղգալի է։ — «Փոխուած են ժամանակները, ինչպէս և մարդիկ» — Այս խօսքն բնաւորեալ կ'արտասանուի երբ արդի Գերմանիան մեր առջև ներկայի և արդարև՝ ի բաց թողլով ամեն աւանդական դաղափար և նախապաշարում՝ կը տեսնենք որ մարդիկ և իրենց փոխադարձ յարաբերութիւնները մեծապէս այլայլած են՝ քանի Գերմանիա վիացած և եւրոպական հղօր պետութիւն մը դարձած է։ Շատ երկար պիտի լինէր եթէ յետադէմ հայեացքով մ'այս արդիւնքն արտադրող պատմական իրողութեանց ուրուագիրն յօրինուէր։ Միւս կողմէ դժուարին է համառօտակի պատկերել աղգ մ'այնպիսի պարագաներու մէջ որ՝ նորահաս լինելով՝ չէին կարող վճռական աղդեցութիւն մը գործել իր ինքնութեան վրայ։

Սակայն այս իրաւ է որ Գերմանիա քայլ առ քայլ կ'դիմէ իր մեծ ճակատագրին իր միութեամբ, աննման յառաջական աղատագրութեան, որ առելի որոշ և վճռական եղաւ՝ ի շնորհս այդ աղգին վառվռուն բնաւորութեան։ Գերմանական աղգին հակամարտ և հակասական տարրերն ինկատի առնելով՝ կարելի է յոռետեսական եղրակացութեան յանգիլ, սակայն անհերքելի է երևակայել որ դերմանները կորուսած են իրենց հին յատկութիւնները, վասն զի իրենց բնաւորութիւնն էապէս պահպանողական է։ Մեր նպատակը պիտի լինի իրրև անկողմնակալ դիտող, արդի Գերմանիոյ ժողովրդային կենաց զանազան երևոյթները նկարել։ Բնաւորութեան վրայ կ'աղդեն արտաքին պարագաները, ինչպէս բնաւորութիւնն ղանոնք կ'կազմաւորէ, և ինչ որ յետին աստիճան կ'աղդէ տոհմային անհատականութեան վրայ, կ'ծառայէ նաև պատկերել երկրին ընկերային վիճակը։

Աւելորդ է ըսել թէ ժողովրդեան մը բարօրութեան հիմերէն մին է իր ապրուստի ծախքերուն վճռին հինգեակ տարիներու մէջ գերմանական պետութեան ժողովրդեան միջին աճումն 7 տոկոս էր։ 1880-90 բնակիչներու թիւն 50 միլիոնի հասաւ։ Տրոէբնէրն՝ որ պահ մը նուազեայ 1880ին, նորէն սկսաւ աւելնալ այս վերջին տարիներու։ Տարադիրներու մեծագոյն մասն նախ՝ Բրուսիա ապա Բաւէրանիա, Վէսթֆալիա և Պրանտէպուրգ կուգային։ Աղգային ժողովը բոլոր պետութեան համար տարագրութեան վերաբերող օրէնք հաստատելու ձեռնարկեց, սակայն Պիզմարդ իշխանն, որ տարագրութիւնն իբրեւ չարիք կ'նկատէր՝ դանց ըրաւ այդ խնդիրն և իր հետևողներն նոյն ընթացքը բռնեցին։ Սակայն՝ ինչպէս վերջին վիճակագրութիւններն կ'ցուցնեն, Գերմանիոյ համար տարագրութիւնն իրրև չարիք պէտք չէ նկատել, այլ իրրև ընկերային հարկ մը։ Նոր օրէնքն որ չենուելու վրայ է, ազատականն չահերը պաշտպանելու նպատակ ունի, սակայն պարտ է նկատել որ գործաւոր դասակարգը բնազդս չխափանքիր իր բնիկ երկրէն հեռանալ ու գաղթել, եթէ իր նիւթական պայմաններն որով կ'տառապի այժմ՝ բարւոքին։ Ինչպէս Միացեալ-Նահանգաց նոր օրէնքն որով տարագրութեան դէմ թումբ դրած է, նոյնպէս արդ ելք մ'է գերմանական տարագրութեան երկրին ընդհանրական դրութիւնն, որով ամեն մարդ պարտաւոր է տան եօթ տարեկանէն ընդհանրապրիլ մինչև իր մարդական ժամանակի լրումը։

(Շարունակելի)

ԴԱՄԲԱՆԱՅԻՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1892ին ամառնային կէսօրէ մ'առաք երեկոյեան մութն ևս քան զևս կը թանձրանար, մինչդեռ Սան–Ստեֆանոյի մեծ տան պատշգամին երկաթեայ թափօռ վանդակապատին վրայ կըռթնած և ծնօտս աջ ձեռքովս բռնած տրտմակի դէպ ի ծովը կը նայէի, զալտեան մի սպասելով։ Պատրանք մի ևս վաթտուած էր յիս, և այս գիտակցութենէ արտաղրուած անախորժ տպաւորութեան ներքև կը խոհէի, կերազէի, հաւանելով որ մեռքս թափառելով թարթափի իմ առջև պարզուած Մարմարայի տարածութեան վրայ։ Խոհանացս, մեզամաղձութեանս առարկաներն էին մարդկային երանութեան դիւրաբեթիւնը, աչխարհիս ունայնութիւնը։ Տե՞ղն էր վիլիսոփայելու յիրաւի, և՝ սպասելով դժբաղդ բարեկամուհւոյ մ'երևման՝ աչերուս արդէն խոնաւիլը կ'ղղայի։ Մինչ առագաստաւորնաւի մը վերջալուսային ժամերու յատուկ և դեռ թափանցիկ աղօտութեան մէջ մերթ անորոշակի ընդհարուիլը և մերթ տեսութենէ կորսուիլը դիտելով կը չարունակէի չզգալ վայրկեաններուն սահիլը և անհետիլը, դրան մը ծխնիին թեթև ճռինչն ուշարրեց զիս։ Դլուխս դարձուցի, և ահա եկաւ, ամռոի մը կքուելու պէս բաղմեցաւ յոտից ցղլուխ սևերու մէջ թաղուած տիկին մը։ Գունաթեկ էր նէ և տրտում։ Ծաղկեայ խորանի մը վերև կախուած և մանիչակներէ ու վայրի ծաղիկներէ չքջանակուած լուսագիծ պատկերի մ'առջև աղօթելէն եռք զիս ընդունելու եկած էր ժպիտով մ'որ առենօք նէրա դիմական ընորհագեղութեանց առաջինն էր, և որ արդ՝ իր պարունակած հեծկլտանքով՝ կարծես ճակատագրին անողորմութեան դէմ արձակուած արհամարհութեան ու միանգամայն սրամտութեան չանթի մ'աղդումը ունէր։

Սրբուհի Տիւսարն էր նէ։ Իր հոգեսուն Տօրինը, իր անզուգական պատկը կորուսած և Նիոպէի ժայռին պէս վշտի և թշուառութեան կենդանի արձան մը դարձած էր։ Ներա աչերը կարմրած էին, և տակաւին կը կրէին առատօրէն հոսուած արտօսրներու հետքը։

Գուցէ պիտէր թէ Իղմիրէն յատկապէս եկեր էի իր զաւկին գերեզմանին վրայ սլսակ մ՚անձամբ դնելու համար։ —Ձիս տես-նելով՝ ըսաւ.

— Տօրինա կորուսի, բարեկա՛մ, այլ ոչ իր հոգին որ անմահ է։ Ա՛լ ինձ ևս կը մնայ երթալ ուր որ է նէ, իրեն հետ ընդ-միշտ ապրելու համար։ Կը հաւատա՞ս Աստուծոյ էութեան և հոգւոյ անմահութեան, չարայարեց՝ սեւածիր մանչիկոջը իր աչքը սրբելով։

Ոտք ելած էի երբ նէ դէպ ի պատշգամն ուղղուած էր քովս գալու համար։ Մատիկ յուզուեցայ և՝ իբր պատասխան իր ա-հարկու հարցումին՝ դէպ երկինք նայեցայ անդամ մ՚ևս աչե-րուս թրջուիլը զգալով։

Ետքէ՛. մինչև ան առեն կը կարծէի թէ ժամանակն և մոռ-ցառութիւնն ընտելացուցած են միս ճակատագրին սովորական սեւութեանց, և ինքզինքս կը համարէի անդրդուելի անտարբե-րութեամբ համակուած ստոյիկեան մի։ Մոռցեր էի, կամ ուզեր էի մոռնալ թէ ես ալ ունիմ աչեր որք գիտեն լալ, թէ ունիմ կուրծքիս ներքև սիրտ մ՚որ կը բաղխէ, թէ ունիմ միտք մի որ իր ապիկարութեամբը հանդերձ գէթ մարդկային վշտի մը խո-րութիւնը կը չափէ երբեմնակի։ Հաւտացեր էի միամտապէս թէ կարող եմ կենաց ախտաւոր իրողութեանց տեսարանին առջև անխռով մնալու, մահուան անգիտակից չհատակութեանց առջև յուզմունքս զսպելու. թէ վերջապէս տիրացած եմ այն ոգւոյն որ ըղեղ մը ջախջախելու սահմանուած հրապճով մը կը պինէ յոյսէ և լոյսէ ճանճրացած Տը Գամօրի մը բազուկը՝ ատոր թեւալարելէն ետք իր զաւակին ուղղուած և ինքնամոլութեան և անզգայութեան հրաշակերտ սեպուած կտակ մի։ Այլ ատկայն ինքզինքս խաբեր էի։ Նէ որ իմաստասիրական ծանր երկերու ընթերցումներով իր միտքը սնած էր, նէ որ մարդուս անդրա-դամբանական ճակատագրին ու նախատահմանութեան վերա-բերող անլոյծ և սոսկալի հարցերը ուսումնասիրած և հզօր միտքերու յատուկ փիլիսոփայական համոզումի մ՚արդէն դոյացուցած էր ինքզին իր հանրածանօթ հանճարեղութեամբ, նէ որ իր թէ՛ դրատար և թէ՛ անգիր գաղափարներովին և զգա-ցումներովին իր մտքին ընդարձակութեան և սրտին մեծութեան չափը տուած էր հայ գրականութեան աշխարհին մէջ, այժմ իբր Տօրինին մայրն՝ հարցումներուն ահեղապոնով սարսեց զիս, և ոչ սիայն զգացուց ինձ թէ անասելի և անգարմանելի վշտի մը

բեռին ներքև ճզմուած է ինքն, այլ նաև թէ ես ալ դերեզմանի մ'առջև չէի կարող զսպել արտօսր մի . . . :

« Մեռանի՛ Տիկինն, մեռա՛ւ Տիկինն, » կաղաղակէր Պօսիւէ՝ Անրիէթ Տ' Անկլէրի մահը բոլոր Ֆրանսայի, բոլոր Եւրոպայի գուժելու համար :

Զուարճ հռչակաւոր եկեղեցականին տաղանդը ամբողջ դամբանական մ'աղաղակի մը մէջ ամփոփելու համար, այլ ունէի դամբանականներու պերճադոյնը, ստուգապէս ոգեհար հոգւոյ մը արտայայտութեան յուզմանց հաւաստի՛ք, զոր այն օր նուիրեցի Տօրին Տիւսարին, զոր քիչ ժամանակէ ետք հարկադրուեցայ նուիրելու նաև իր մի սիրական բարեկամուհոյն, ոչ նուազ ողբացեալ Օր. Բարիզ Կոստանդեանի, և զոր այսօր ալ կը նուիրեմ Տիկին Ց. Արաքսիա Կիւլլէնկեանին յիշատակին :

Տօրին Տիւսար սիրտովը հայ, լեզուովը գաղղիացի, չընորհալի և պանծալի պատանուհի մ'էր, իր մեծանուն ծնողաց արժանի զաւակ մ'էր : Տասնամեայ հասակէն վեր կը ճանչէի դինքը, և ստէպ առիթ ունեցեր էի զմայլելու իր կանխահաս հանճարամտութեան և լեզուանուիթեան գանձերուն վրայ : Տղայութեան օրերու յատուկ այս գանձերն ևս քան զևս աւելցան տարիներուն հետ : Բարիզցիի մը պէս Ֆրանսերէն կը խօսէր, նաև կը գրէր, իր տեսածները և զգացածները իրր պատկեր ընթերցողին առջև կը պարզէր՝ Զօլային գրչին նմանելու նկրտող իր պատանեկան գրիչով, որ պատկերահանի մը վրձինին կամչութիւններով կը վայլէր արդէն : Իր վաստքը կազմելու պատրաստուող տաղանդներուն մին էր երաժշտութիւնը, որով օր մի վեհափառ Սուլթանին առջև դաշնակ ածելու և Նորին Կայսերական Վեհափառութեան հաճելի ըլլալու ու վարձատրուելու փառքը վայելեց : Իսկ Բարիզի մէջ, իր մեծանուն մօր թևին և հակողութեան ներքև կատարելագործելով իր երաժշտական հմտութիւնները Ամպրուազ Թովմասի և Կուինօյի չնորհաւորութեանց արժանացած էր :

Տօրին Տիւսարի անբաժան և սիրական ընկերուհիներուն մին էր Արաքսիա : Մօտէն կը ճանչէի Արաքսիային, վահանեան դերդ աստանդ անուան չուք բերող այս անտիական անձին բարեհասնութիւնները : Շնորհալի էր նէ և լեզուանի : Ուսեալ էր նէ և լեզուագէտ : Գերմաներէնի և Ֆրանսերէնի մէջ ունեցած հմտութեանց և իր հոգին զարդարող դերընտիր յատկութեանց չնորհիւ արդէն ծանօթ էր Բիւզանդիոյ հայերուն, հանդիսացած

էր Բերայի հայ և օտար ընկերութեանց մէջ մի փայլուն թադուհի, և Օսմանեան վեհապանծ Դերդաստանին թարգմանութիւնը ըլլալու փառքին արժանացած էր։

Տիւսար բաշայի սեղանին բոլորտիքն, ուր ոչ նուազ կ'փայլէր նաև հանգուցեալ Օր. Բարիզ Կոստանդեան իր ուսումնասիրով, լեզուագիտութեամբ և մշակուած իմացականութեամբը, Տօրինէն դէպ Արաքսիա և Արաքսիայէն դէպ ի Տօրին և Բարիզ կարճակուէին ազգ. կատակաբանութեան նրբին սլաքներ, ախորժելի հանճարամտութեամբ լի պատրաստաբանական պատասխաններ և դիտողութիւններ. դրականութեան, պատմութեան, երաժշտութեան, նորաձրակական ճաշակի, դոյներու դիտութեան ու ներդաշնակութեան վերաբերող խորհրդածութիւններ, բացատրութեան կարօտ ակնարկութիւններ, պարկեշտութեան և հաւատութեան սահմաններու մէջ պատմուած մասնադէպեր։ Եւ այս իմացական ու բարոյական ճոխութեանց առջև կը մոռնայի իմ ազնիւ բարեկամ Տիւսար բաշայի պնակներուն ճոխութիւնը, և այս մտային անյագութեանս իրր գերի՝ կը մոռնայի նաև խեղճ ստամոքսիս բողոքալի աղաղակները . . . ։

Սեղանէն ետք կը շարունակուէր տեսարանը, Տօրին և Արաքսիա՝ իրր երկու սիրուն թռչուններ՝ կը ճռուզէին, կը գեղգեղէին, փոխադարձ սրամտութեամբ և հանճարաբանութեամբ կը մրցէին, կը խօսէին, կը ժպտէին, կը խնդային, բարձրաձայն ղիրար կը կոչէին, ապադային յոյսերով համակուած կը հրճուէին, նաև ախորժելի խաղեր կը խաղային անոր ատր։

Արաքսիա վահանեան օր մը հաւանեցաւ հաւատալու ամուսնական երանութեան, յանձն առաւ Յովհաննես Կիւլպէնկեանի պէս հոյակապ այր դժբաղդ երիտասարդի մը երանութեան հեղինակն ըլլալու՝ առանց ճակատագրին հաւանութիւնը առանալու կանխաւ։ Բաբէ, մինչ Տօրին Ֆրանսայի առաջին կարգի երաժշտագէտներու առաջնորդութեամբ կը պատրաստուէր կանգնելու փառքի պատուանդանին վրայ, յանկարծ աղօտալէս ընդնշմարեց սեւաթոյր խաչ մը, որ Աբեղեքի հորիզոնին անդունդներէն կերևար դխակառքի մ'աղեռալի կիսատուէրին վերև . . . ։ Արաքսիա համարձակեցաւ վեհատեան տաճարի սպասուհին ըլլալէ դադրելու և Լիմենեանին քրմուհին հանդիսանալու, և ահա սիպերիական քամիի մ'անողոք ու մահարոյր չունչը խամրեց այս նորափթիթ ծաղիկը, և տխա Տօրին, և ահա Արաքսիա դադրեցան երգելէ, դադրեցան ընչելէ, դադ-

բեցան ժպտելէ, դաղրեցան իրենց սիրականները մխիթարելէ, և ահա վերջ առին կեանքեր որոնց անարատութեամբն և չքեղութեամբն արդ կը հպարտանան անդիմադրելի անդիտակցաբար «փոսապեղէն չինուած յաւիտենական տուներուն»[1] ամենէն նախանձոտներն և անգութներն, հողերուն ամենէն սոսկալին և ամենէն սևը, այն որու մէջ՝ ըստ Համլէթի՝ «Աննիպալներն, Աղէքսանդրներն փուչի կը դառնան և կը չինեն բրուտին կաւը՝ դարնջրի տակառի մի ծակը գոցելու համար»... և ահա վչտահար մխաքս կը թափառի այս երկու աղետալի դամբարաններու բոլորտիքը, որոնց վրայ յերկրուստ կը յառի տակաւին լացող Տիւսաբներու, վհաններու և Կիւլպէնկներու մոլորադին նայուածքը, մինչ յերկինուստ խորհրդաւորապէս կը սարսռին վհանեանի և Կիւլպէնկեանի սգահար հոգիները։ Իսկ ես տրտմապէս կը ծնրադրեմ Տօրինի և Արաքսիայի այս մահաշուք կափարիչներուն առջև, և ամէն մէկին վրայ կը տեղաւորեմ դամբանային պսակներուն ամենէն անթառամը, ամենէն անկեղծը, և սրտէս խմուած «սրտէս թափուած,»[2] արտասուքի յետին չիթը։

Գ.Ր. ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆ

ՄԱՏԱՄ ԱՏԼԻՆԱ ՓԱԹԻ

Ի ՇԻՔԱԿՕՑ

«Երգոց Թագուհին» կ'իմանամք թէ քաղաքս կը գտնուի և զնէ լսելու անդիմադրելի մղումէ կ'զգամ ի հարկէ իբր երաժշտութեան սիրահար։ Փաթի այս անգամ թէ դրամ շահիլ և թէ միանգամայն Ամերիկեան երաժշտասէր հասարակութեան հրաժեշտ տալու եկած է, և հետևաբար չկրնամ արդարացնել խիղճս եթէ այս բացառիկ պատեհ առթէն օգտելու չփութամ։

Լալկան կլիմայ մը առաւօտէ ի վեր արտասուած էր և կատաղի փոթորիկ մը ևս ընկերացաւ այսմ կէս օրէ անմիջապէս վերջ, սակայն այս

---

[1] ՇԷՅՔՍՊԻՐՅՐ· Համլէթ

[2] Ալֆրէտ Տը Միւսէ։

ամեն արգելք ոչինչ կրնային ընել զփաթի լսելու փափաքը մարելու մասին։

Օփէրէյտ՛ի թեատրոնը կը գտնէի ինքզինքս կէս օրէ իբր երկու ժամ վերջ։ Ժամանակս սպաննելու համար ձեռքս միայն նուագահանգիսի ծրագիր մը ունէի։ Այս առթիւ հարկ է ասդ յիշել թէ փաթիի նուագահանդէսը ընդհանրապէս մեծամեծ փոփոխութեանց չէն ենթարկիր, ծրագրի մէջ միայն այս կամ այն տողն ետ ու առաջ կը դրուին ըստ պահանջման պարագային եւ այդ կ՛ամբողջացնէ միակ փոփոխութիւնն։ Այսու հանգերձ պէտք է խոստովանիլ թէ վերջերս շարագրեալ մէկ օփէռ ծրագրին մէջ նկատելի դիրք մ՛ունէր։

Կ՛ըսուի թէ, «միօբինակութիւնն ձանձրութեան մայրն է», և արդարև կ՛աքանչանաս մեծապէս յորժամ ի նկատի ունենալով զայս ասացուածք՝ անձամբ կը տեսնես փաթիի գտած յաջողակութիւնն երգելով այն երգեր զորս սովոր էր ատլ ասկէց տասն և կամ աւելի տարիներ առաջ, միշտ միևնոյն ոգևորութեամբ և ձայնի ճկունութեամբ մը որ տարիներու հոլովման վրայ կարծես կը ծիծաղի։ Փաթի շնորհիւ իւր արտասովոր ձայնական յատկութեան երաժշտական աշխարհի մէջ տակաւին կը պահէ իւր դիրքն իբր անզուգական առաջնորդ։ Իսկ հասարակութեան համար չէ այլ ինչ բայց եթէ մի պաշտելի արարած. և միթէ սխալած կը լինին փաթիի հանճարոյն վերայ հիացողք եթէ ըլնէ «երգոց թագուհին» անուանեն։ Դիւրին չէ գուշակել թէ ի՞նչ պիտի լիներ Ադելինի և փաթիի յարաբերութիւնք եթէ վերջինն պատահաբար ծնած ըլլար Աբրեւտոից ոստանին մէջ և յուռնաստան հելլէններու դիցաբանական դարաշրջանի միջոցին։ Սակայն չմոռնանք թէ նէրա ծնողք չեղլադաւ քայլ մը այս դին՝ Իտալական կապոյտ և բանաստեղծական երկինից ներքև կ՛ապրէին, և ո՛ գիտէ քանի՛ քանի՛ սերընդական ժառանգեալ ազդեցութիւնք և ո՞րքան կլիմայական և ունակական տպաւորութիւնք միացան արտադրելու այն եզակի՝ չքնաղ ու անընմանն ձայնն որոյ վերայ կը հիանայ աշխարհ համայն։

Հանդիսականք կը ներկայացնին ամէն դասակարգ և ի մանաւորի երաժշտասէրն, սակայն բարձրագոյն դասակարգի, կամ տեղական բացատրութեամբ, ընկերութեանց ներկայացուցիչք «Society people» Անգլիացոց հոյ ըսէ՛ին վերաբերողք, եւս նկատելի մի դիրք գրաւած են։

Ծափահարութիւնք խլացուցիչ յատկութիւն մ՛ունէին յորժամ փաթի առաջին անգամ ըլլալով տեսնուեցաւ թատերաբեմի վերայ։ Աչխարհահռչակ երգչուհին միջահասակ է, ունի իտալական աչեր, յօնք ու քիթ, դէմքն հրապուրիչ և ժպտալից, կեցուածքն դերասանական, աչերն մերթ սևեռուն և մերթ խօսուն իւր ձայնի հանգոյն, իսկ պպզուն շրջագեստն ադամանդակուռ՝ էլեկտրական շլսյլ լուսոյ հանդէպ կը փայլի այնքան մինչ տալ մեզ հանդիսականաց դիւցազնուհոյ մը պատիր երևոյթը։

Առաջին անգամ «Պել Բաէլ»ն երգեց և կամ լաւ ևս խօսեցաւ, և մեր հոգիք մնացին ընդ երկար հմայեալ իւր մոգիչ ձայնական աղդեցութեան ներքև. Ծափահարութիւնք արթնցուցին զմեզ և բնականաբար հարկ եղաւ իրականացնել այս գործառնական միջոց ընդ որ անցած էի, և ուստի երկար տաեն յիշողութեան մէջ կը յառեմ բառեր, կը պրպտեմ դպացուածներս և տպաւորութիւնքս ի դիր առնլու և կամ բարեկամի մը բացատրելու դիտմամբ, սակայն ամեն ջանք ի զուր են, և ահա մի բառ

կուգայ միտքս յանկարծ — Ագանչելի՛ — կ'ուրտասանեմ յակամայս քանի-ցըս, և վերջապէս կաղտոտիմ մնայնին տագնապէ մը և ածականները յօրինե-լու դժնդակ աշխատութենէն։

Նոքա որ կ'ակնկալէին փաթիի ձայնին մէջ փոփոխութիւն մի նշմարել մեծապէս յուսախաբ եղան, սյնու զի ներա ձայնական թելեր առանց մա-ղի չափ փոխուած ըլլալու պահած են իրենց նախնական առոյգութիւնն քնական վիճակի մէջ՝ ընդ միշտ արհամարհանօք նայելով տարիներու հո-լովմանն վրայ։

Անդադար ծափեր անգամ մի ևս փաթին թատերաբեմն առաջնորդե-ցին։ Ա.յս անգամ մեծարեց իւր հանդիսականներն «Ի-Ա-Վ-Ի»ն երգելով և հեռանալ բարեձև և նաղելի քայլերով։ Սակայն ունկնդիր հասարակու-թիւնն մի անխուսափելի պահանջ ուներ և փաթի անտեղեակ չէր այսմ։ Օսիթօրիյըմ կը գոռար ծափահարութեանց սաստկութենէն։ փաթի չէր կրնար անտեսել այս ցոյց եռանդալից, ուստի և նորէն երևցաւ, այս անգամ իւր ուսոց վերայ փաթիաց մ'առած և իւր յատուկ շնորհալի ու սիգաճեմ քայլերով մօտեցաւ դէպ ի երաժշտախումբն որ սրդէն իսկ սկսած էր «Home Sweet Home» նուագել, թէև ծափահարութեանց մէջ ալեկոծ ըլլալու աստիճանին հասած է։ Ա.յս՝ Անգլիախօս ազգաց սրտին՝ ամէնէն քաղցր խօսող ժողովրդական երգն կը համարուի, և փաթի զգոյն իւր յատուկ աճուն ու եղանակաւ երգեց և ամենուն դոհունակութեան արժանացաւ արդեամբ։ Եւ երբ լրացուց՝ իւր համբաւէն պահանջեալ արուեստական նաղանօք, խնարհութեամբ և դերասանուհեաց առանձնայատուկ կոտրտու-քով ծափահարութիւնները իր եռանդագին հեռացաւ թատերաբեմէն, դե-ռատի դերասանուհոյ մը յաւէտ նմանագոր, և բոլորովին կարծես անդի-տակ իր տարիներու թուոյն՝ որոց տպաւորութիւնն կարելի չէ մինչև իսկ դիտակաւ նշմարել իւր ծիծաղկոտ և սիրուն դիմաց վրայ։ Ծափեր գամ մի ևս սկսան դոռալշնել սրահն և ահա Սինեօր կալլասի երևցաւ յետ առնական մի խնարհութեան և սկսաւ երգել, սակայն՝ անմիջապէս նկատեց թէ ծափահարութիւնք դադրած չէին և թէ ներկայութիւնն թատեր-բեմի վրայ բոլորովին անակնկալ մ'էր։ հասարակութիւնն փաթիէ սոսկ մի Անգլիարէն երգ լսելով չէր կրնար բաւականանալ և իրաւունք ունէր մի այլ Անգլիերէն երգ ևս լսելու արդար պահանջն բառնալ ծափահարու-թեանց ձևով։ Սինեօր կալլասի իրաց վիճակն խակոյն ըմբռնեց և կրունկին վրայ ետ դարձաւ խնարհութեամբ մը, իւր թագուհւոյն պատմելու թէ շնորհակալի հասարակութիւնը փաթիի կոպասեր և թէ կալլասի լռաւ երգ-քեր կարող չէր նէրա պակասն լրացունել։ Սինեօր կալլասիի պատուհրա-կութիւնն տպարդիւն չմնաց։ Սա նէրա ճամբուեցաւ ոչ սյնու զի Ամերիկ-եան հասարակութիւնն չսիրողիր իտալական ջէլատնէրի այլ որովհետև Անգ-լիականներն առաւել կը սիրէ։

Փաթի գամ մի ևս երևցաւ հանրութեան պահանջման յաղուրդ տա-լու նպատակաւ։ Երգեց «Comine' Thro' The Rye» ձեռաց այնպիսի վայե-լուչ շարժմամբ և ակնարկներով որը փաթիի և եթ վերապահեալ են և այս անգամ հեռացաւ այնպիսի սէգ և հաստատակամ կերպով որ կը նշա-նակէր թէ յոդնած եր և չպիտի կրնար անգամ մ'ևս երևիլ եթէ հան-դատանալու ատիճ չտրուէր իրեն։

Փաթի իրը դերասանուհի այնքան մեծ հռչակ հանած չէ, որքան իրը անմրցելի և առաջնակարգ երգչուհի։ Սակայն տիրող կարծիքն այս է թէ Տիկին Փաթի դերախաղացութեան մէջ ևս աքանչելի հանճար և կարողութիւն կը ցուցնէ։ Այն կատակերգութիւն՝ որ ծրագրէ երբ մտան կը կազմէր և որու մէջ մեծագոյն և ամենակարևոր դերն կատարեց Փաթի արդարև ընդհանրութեան զմայլման առարկայ եղաւ։ Այս առթիւ Միստըր Լիլի, Փաթիի խմբին միակ Անգլիացի անդամն, կը սիրահարի Փաթիի և առանձներգերով կը ջանայ սէգ և հպարտ Իտալուհոյն սիրան շահիլ։ այլ, աւա՛ղ, ապարդիւն կը մնան Լիլիի կրնկակի ջանքեր։ Երիտասարդն վերջապես յաջողեցաւ մի կարմրուկ վարդ ներս ձօնել և գոգդես այդ ծաղիկ դիւրաթարշամ՝ Կիւպիտոնի մը դերն կատարեց անոնց միջև։ Փաթի իսկոյն կը կորուսանէ իւր նախնական անտարբերութիւնն և համբոյր տալու մասին ցոյց տուած դժկամակութիւնն. չէ այլ ևս հպարտ և ոչ ալ սիրային զգացմանց դէմ առ դէմ՝ անտեղատուն. առաւել հակամէտ և արամադիր կը թուի Լիլիի հետ բարեկամական յարաբերութիւնները մշակելու։ Լիլի ևս բաւական վարպետորդի է զայս կատարելու. և ուստի բոլորովին դիտակ իւր սիրուհւոյն կրած զգացական բարեփոխութեանց, մի ձեռնարկ ևս կ'ընէ յարաբերութեանց կապերն ամրապնդելու և տէր Իտալուհին իւր սև աչերն սիրելոյն աչաց մէջ սևեռած, գլուխն կ'իջուցանեն Լիլիի կրծոց վրայ՝ «Ամրան վերջին վարդն» ալ ձեռքն բռնած, յորմէ յետ բոյրներու տպաւորութենէն հազիւ սթափած կսկսի մի գողտրիկ և սրտադին եղանակաւ երգել.

«Tie the last rose af summer,
Left blooming alone . . .

Այսուհետև կը վերջանայ Նաւադահանդէսն և մեկ «Ամրան վերջին վարդ»ին հեշտ և անմոռանալի տպաւորութեանց ներքև Օպիէօրիսըմն կը մեկնինք յանչափս գոհ մնացած։

20 Յունվար 1894 Ն. Ճ. ԹԱՍՊՈՒՏԵԱՆ

ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ԻՄ ՅՈՒՆԵՑԻՍ ԹՈՒՐՔԱՍՏԻՍ

(Որ լրացնելով սիրուհիս, ամուսնացաւ ուրիշի մը հետ)

Կը խոստովանիմ որ կորուստդ անդարմանելի է, յանձին այն չքնաղազեղ հուրիին, զոր կը պաշտէիք լռելեայն ի բոլոր սրտէ, և որուն հետ սակայն, եթէ ոչ ամուսնանալով երջանիկ ընտանիք մը կազմել, գէթ ցկատարած աշխարհի վրօանուալ էր սմբողջ ձեր տեղ չէ

Թաշկինակներուս պաչօն չը պիտի յանձնեմ այս առթիւ ձեր կարճատես աչքերէն հոսած արցունքները սրբելու — որովհետեւ անոնցմէ ոմանք աղտոտ են, եւ ոմանք ալ լուացարարին քով կ'ուզատեն — եւ ոչ ալ պանկս պիտի ճամբեցնեմ համոզելու համար զիս թէ «գեղեցիկ սեռը ձեր կարծածին չափ ազէտ չէ, եւ թէ պանոնք գնահատելու համար դեռ ևս բաւական պաներ հացի կը կարօտինք», այլ պիտի աղաչեմ որ, տխուր իրականութեան հետ այսչափ մօտէն չփուելէս վերջ, թոյլ տաք Շօբէնհաւերին օձիքը, ու ինքնին երկասիրէք գործ մը, որ յոռետեսական մարմնացումն ու վերջին խօսքն ըլլայ։

Բայց որո՞ւ կ'ուղեմ ես այս տողերը, մինչ դուք իրօք լըրուած սիրահա՞ր մը, կամ յուսավրէպ նշանա՞ծ մ'էք։ —

— Անշուշտ ոչ մին եւ ոչ միւսը, այլ վարպետ որսորդ մը, որուն լարած ցանցերէն այն առեն մինակ կրնան պրծիլ օրիորդները, երբ տխուր իրականութիւնը գայ հասնի — 25–28 տարիքը — ու դրականապէս համոզէ զիրենք որ, «ախերէն ջերէն. յոյժ ջենական երջոհներէն, կը պէտք չ'ենդներէն» վերջ, բան մը կը պակսի իրենց, աշխարհիս մէջ ապրելու համար ... ամուսին մը կարծեմ, եւ այն առեն՝ երանի՛ այն ամուսնոյն, որ ձեր հասցուցած օրիորդներէն մին կ'ընտրէ իրեն կենակից։

Բայց հարցումդ ի՞նչ է, այս ամլներուն նկատմամբ, այս երկու դժբաղդ ամուսիններէն ո՞րն է արդեօք արդահատելին կ'ըսեն, ահաւասիկ այս կէտն է որ կը ջլոթէ զիս ու բացատրելու կուտայ Պալզաքի հետ — ո՞ր Պալզաքն է ըսածս գիտես. Մանասդրցի Մինա Պալզաքը, որ Պօլսոյ հրապարակէն ապրանք գնելու եկած ժամանակ, երբ տեսնար որ վաճառականներու հանած վարած գործակատարները գինքը կատղեցնելու համար յատկապէս խենթ ու խելառ գիներ կը պահանջեն, իր Մակեդոնական չեչոտը կը պօռար — կրա՛ն լէվ-ըրա պէյլէ հէսապ եէ՛ճ։

Ձեր կրա՛ն լէվ-ըին մէջ այսպիսի հաշիւ մը կա՞ր, որ այն ... (ի՞նչ ըսեմ) Հրէշ ... ը, ո՛հ, ներեցէք, կը չփոթիմ, չեմ կըրնար ածական մը, տիտղոս մը, հոմանիշ մը, պատուանուն մը, պահման մը տալ իրեն, իրե՛ն որ արդէն ինքնին տուաւ իր վճիռը, ու գծեց սահմանը, երբ քեզի պէս սիրուն բանաստեղծի մը գաղտրիկ տողերը ոտքի տակ առնելով — կամ առատ կոխելով, եթէ կը նեղուիք — դնաց կոթնեցաւ, ոսկեզէն հորթի մը, որ աւա՛զ պիտի ջախջախէ զինք. իր սուր եղջիւրներովը ու

անտանելի լուծովը, թէև ըլլան անոնք գոհարներով զարդարուած։

Հաւատացէք որ, դեռ հաւատալս չը դար կոր այս Ի֊Ռօբէյէն,?? ըսենք հեղինակութիւններդ մոռցաւ — թէև բնաւ հաւանական չը թուիր որ այնպիսի դրական գոհարներ, մոռացութեան տակ թաղուին կնոջական սրտի մը մէջ — , թարգմանութիւններուդ ի՞նչ պիտի ըսէ, հապա այն ոտանաւորնե՞րդ ուր դնենք, որոնք ընդհանրապէս աչխարհաբառ կը ծնէին, ու դրաբառ կ'ապրէին։ եթէ այս ամենը միևչև իսկ աս լսանէկն, ու չիճախոզին ալ մոռնայ, բան մը կայ զոր երբէք չը պիտի կրնայ մոքէն հանել, Գուրգէն էֆ֊ի պոպկերէն մէջի հրաչակերտդ ըսել կ'ուզեմ, այն խորիմաստ տողերը, որոց իւրաքանչիւրին առջև ժամերով հիասքանչ չը մնալ չը կրնար ընել ամեն արարած, որ յոռետես է, աւա՛ղ որ մեղացս չատութենէ ինձ համար միչտ դուռ դուռ մը պիտի մնայ այն։

Մի լաք, բարեկամ, ձեր դժբաղդութեանը վրայ. ողբը անկարողներուն բաժինն է. փառք Աստուծոյ դուք դեռ երիտասարդութիւն, հմտութիւն, դրամ, կորով, խորամանկութիւն ունիք, մանաւանդ որ յոռետես ալ էք, այս ամեն առաւելութիւններն ունենալէ վերջ, ալ ինչ կը պակսի ձեզ թեթևասլիկ կիներն ու աղջիկները զլխելու, սակայն օգտուեցէք անցեալին փորձառութենէն, Ռօֆէն և ժէ֊լէնը ամենևին բերաննիդ մ'առնէք։ Մեղքերնին չունն առնէ, ես այնպէս կը կարծեմ որ, այդ թշուառականներն եղան պատճառ ձեր հրատոչոր սիրոյն այս ապարդիւն եղրակացութեանը. ո՞ւր է կը յիշէ՛ք, ակռնջը Ռօֆէռօ հետ ժամերով առանձնացած Ռօֆէռօ և ժէ֊լէնի այլ և այլ թարգմանութեանց բաղդատութիւնը կ'ընէիք, ես այնպէս կ'ըսեմ որ անոնց դժբաղդ կեանքը ձեր վրայ ալ ազդեց և հոդերանօրէն խօսելով՝ վարակուեցաք մի և նոյն ախտէն, որ ուրիշ բանով կը բժշկուէր, եթէ ոչ իմ գրածներս չը կարդացուիլ, ու յոռետեսութեան վրայ երկար հատոր մը գրելով։

*
* *

Գրեցէ՛ք, բարեկամ, կաղաչեմ գրեցէք, յոռետեսութեան վրայ, երկար հատոր մը գրեցէք որ ես ալ սորվիմ սա գեղեցիկ անցնելիք յոռետեսութիւնը ու մարդու մէջ մտնելու երես ունենամ, եթէ ոչ ի՞նչ է աս իմ քաչածս։ Մինի մինի տղայքներ,

դպրոցական պատանիներ ամբողջ յոռետես են, և ես, մեծ մի մարդ՝ դեռ յոռետեսութեան վրայ գաղափար մը իսկ չունիմ։

Անցեալ օր երեկոյթի մը մէջ 18 տարեկան սիրունիկ աղջկան մը հանդիպեցայ, զոր մատնանիշ կ'ընէին իբրև ծայրայեղ յոռետես, ու ինքն ալ խոստովանեցաւ մեզի կ'ըսէր այս տաղանդին վրայ, տաղանդ մը՝ որ փառք Աստուծոյ մենաչնորհ չէ քանի մը անձանց մեռք. և այսօր մեր դպրոցականներուն ամենքն ալ — հայրապետական բացառութեամբ — դեռ աչք չը բացած, չորս կողմերնին չը նայած, յոռին ու բարին չը ճանչցած, կատարյալ յոռետեսներ են . . . թուղթի վրայ։

Ո՞վ կըսէ որ Եւրոպայի մէջ մերիններուն չափ յոռետեսներ ըլլան, մեր խմբագրատաց զամբիւղներուն հարցուցէք թէ օրական քանի՛ քանի՛ յօդուածներ, ոտանաւորներ, բանաստեղծութիւններ կը կլլեն, որոնց ամենքն ալ ուրիշ բան չեն կրկներ, եթէ ոչ իրենց յաւիտենական երգը . . . յոռետեսութիւն։ Մէկը կը գրէ «պէտք է մեռնիլ», միւսը «օ՜հ ծո՜վ քանի՛ քաղցր է աչիքներուդ տակ խաղցած մեալ», մէկ ուրիշ մը «ա՜հ ածո՜ւխ, ածո՜ւխ կ'երկրպագեմ քու կարմիր կանանչ բոցերուդ, որոնք կրնան նպատակիս հասցնել պիս», չեմ դիտեր թէ գեհենին կարօտն ալ քաշողներ կա՞ն թէ ոչ մեր յոռետեսներուն մէջ։

Եւ սակայն հակառակ այսքան աչխարհէ զզուողներու, յուսահատներու, մահ երազողներու, չը տեսայ մեր յոռետեսներէ մին, որ վայրկեան մը հրաժարէր իր զուարճութիւններէն, արիւններէն, զբօսանքներէն, կիրքերէն, ու իրականապէս գործադրէր, ինչ որ թուղթի վրայ կը քարոզէր ամեն օր, և ամեն մարդ ալ իմանար որ այս ինչ յոռետեսը, նկատելով որ աչխարհ յոռի է, նկատելով որ ամեն ինչ ունայնութիւն է, նկատելով որ . . . վերջ տուած է իր յոռետես կեանքին՝ ալիքներուն յանձնելով անկենդան դիակը։ Չէ՛, առանկ բան ընող չը կայ. հապա՛ — ամեն օր ա՛ռ, օ՛ծ, ոչնչութի՛ւն, ունայնութի՛ւն, ահռւասիկ այսչափ։

Ես կը կարծեմ որ մեր յոռետեսները, այն յոռետեսներուն աչակերտներէն են, որոնք Նասրէտտին Չօճան համոզեցին թէ «այս աչխարհը ունայնութեան աչխարհն է, թէ չէր արժեր այսպիսի ցաւերով ու վիշտերով պաշարուած կեանքի մը համար չարչարուիլ, թէ քիչ օրէն պիտի թողէին երթայինայս աչխարհը և թէ քանի որ Չօճան պարարտ ոչխար մ'ունէր, այս աչխա-

հին հրաժեշտ չը տուած, պէտք էր որ ընկերովի զուարճութեան մը մէջ մոռթէին ուտէին զայն»։ Չօճան՝ իրրև դիւրահաւան մարդ, համոզուեցաւ այս ամենուն, և, հակառակ իր կնոջ բողոքներուն, ոչխարը առջևը ձգած, ընկերներուն հետ գնաց գետին եզերքը։ Երբ ոչխարը կրակին վրայ դրին ու եփել սկսաւ, յոռետեսներն հանուեցան ու սկսան գետին մէջ լողալ։ Չօճան նկատելով որ չ'էր արժեր այսպիսի վիշտերով պաշարուած աչխարհի մը համար լաթ պահել և թէ մօտ օրէն պիտի մեռնէին, իրրև ճչմարիտ յոռետես մէկիկ մէկիկ ժողվեց յոռետես ընկերներուն լաթերը ու կրակին տալով ամենքն ալ մխիր դարձուց։ Հ՞արկ է նկարագրել լողացողներուն վիշտը, երբ ցամաք ելնելով լաթերնուն տեղ մէյ մէկ մխրակոյտ ու Չօճայ'ին սա անմեղ պատասխանը դատն թէ» այս անարժան կեանքին համար չ'էր արժեր լաթ պահել։

* * *

Գիտեմ որ արժանապատուութիւնդ վիրաւորուած պիտի զգաս, երբ վոխանակ Ռուսօի, Լամարթինի, Կէօթէի, Հիւկօի և այլ հռչակաւոր հեղինակներու, Նասրէտտին Չօճաէն ապացոյցներ բերեմ քեզ, բայց մի'թէ ի՞մս է յանցանքը որ կանուխ ծնած եմ ու պատեհութիւն չեմ ունեցած Եւրոպայի հեղինակաց անուննները գոց սորվելու։ Մի'թէ ես չէի՞ ուզեր այս առթիւ գրել քեզ «մխիթարուէ՛, բարեկամ, մխիթարութիւնը տըխրութեան սպեղանին է, որպէս կ'ըսէ ... Ռասին, կամ Հիւկօ, կամ Շէյքսփիր»։ Ի՞նչ կը կարծես, մի'թէ ես նախանձ չե՞մ զգար երբ մեր գրողներէ ոմանք ի դէպս կամ չանդէպս, սուտ կամ իրաւ, ամեն գրուածնուն մէջ տաս տասնըհինգ եւրոպալի հեղինակներ կ'խառնեն։

Հիմայ, ինչ որ է, գէշ աղէկ մերիններն ալ սկսան գաղափար ունենալու, հապա ասկից եօթ տաս տարիներ առաջ տեսնէիր, որո՞ւ բերնին էր ընկեր առանց առջևէն ու ետևէն տաս տասնը հինգ հատ եւրոպացի հեղինակներ ունենալու գրական տոպրէզ իջնալ, ամենահասարակ բառերն անգամ անոնց բերնովը սիփի խօսուէին, և ոչ ոք արտօնութիւն ունէր մէկու մը «երջանիկ օրեր կը մաղթեմ ձեզ» ըսելու, այլ ստիպուած էր անմիջապէս պոչէն վահցնել «Որպէս կը մաղթէր Լամարթին՝ այն աչխարհահռչակ բանաստեղծը, որոյ քնարերգութեանց տուար

հատորները դիզուած են այժմ գրասեղանիս վրայ» արժանիք մը՝ որ ամենուն բերնին ջրերը կը վազեցնէր։

Բայց ի՞նչով սկսանք և ի՞նչով վերջացուցինք. խե՞ղճ բարեկամս, միթէ իրաւունք չունի՞ս յոռետես ըլլալու, երբ փոխանակ ֆիլիպաքանի, ասանկ երեխեան մը կարդալու պիտի ստիպուիս։ Այս պարագային մէջ ո՞վ կ'ըսէ որ աչխարհ յոռի չէ, մարդիկ չար չեն, ամեն բան սին չէ։ — լա՛նք, բարեկամս, լանք քեզի հետ, և տեսնեմ քեզ, այսօրուընէ սկսեալ այլ ևս ոչ ծխէ՛, ոչ խմէ, ոչ կռռք նստէ, ոչ թատրոն գնա և ոչ ալ ... գեղեցիկ սեռը հրապուրէ, որովհետև աչխարհ յոռի է։

1894 Փետրվար 22 ՓԱՍԻՄ

Կ. Պոլիս

ԻՒՐ ԿԵՆԴԱՆԱԳԻՐԸ*

Պետրոսածալ մազերուդ տակ
Որ կը փայլին պէս գրահի,
Իբր շուշան, դէմդ ապիտակ
Ի հրապուրիչ եւ շնորհալի։

Կապտածաղիկ են քու աչեր
Մեզ հոգեշարժ եւ յաղթական.
Իբր մի գոյզ աղամանդներ,
Որ երբեմն հրավառ ցոլան։

Վարդակարմիր բերանդ սիրուն
Կարծես մի բոյն է անվրդով,
Ուր սէրն հանգստաւ հանգչի ի հուն
Տիրոջն օրհնած համբոյրներով։

Ձուարթ գլխիւռն ամեն առտու
Շեվրոտուկներն թոլով ձեռուն
Գայ փայփայել քու այտերու
Վրայէդ սնգուան վարդագոյն։

Ֆրանսայի քերթողաց փարիզի ժողովին մէջ քանի մը տարիէ ի վեր պատուաւոր տեղ մը շահող Մեծապատիւ Ալէքսանդր Փանսանանի հետևեալ տաղը՝ որ է (Son Portrait) ի-ր ինքնանկարը վերնագրով քերթուածը, զոր թարգմանեց ընտանօք յարգոյ Պ. Խ. Թէրզեան իւր սովորական վարժ գրչովը։ Ծ. Խ.

Եւ պար մեղուաց ոսկեզրաճիկ
Յպատեղով վայրի վարդեր,
Մեղր որոնէ, զանճ այս բաղցրիկ
Քոյ մանկական զլխոյդ բովեր։

Լանջդ զոհար մէ անցրմաճ,
Ոյր սնամոր վայրին շողեր,
Որ երազել սան սնամեմանց
Երկինք, Եդէմ եւ հրեշտակներ։

Թուշիդ վրայ մէկ պաշտելի
Փոքրագոյն խորշ դրաւ Երա,
Որ բընդեա* զուարթ խումբ մի
Կուզէր միսել անյագն ծծոց։

Ինչպէս վիճի մեղր դառնալիր
Գլխոյս պատոյտ մարդ՝կունենայ,
Այնպէս է տեսին վարդակարմիր
Փայլուն՝ճարմնոյդ՝քոյր սէրն բարեայ։

Եւ նոյն իմին Աստղիկ խորհէշ
Դեռ եւս հիծէ ճախանճ, լալիկ,
Մերկ տեսնելով չքնաղապէս
Անտալուսեան ոսկեթոյ փափկիկ։

Յանդգնայիմ, ո՞ւ ի՞նչ ըսեմ
Որ բեզ բրաւ խիստ գեղանի,
Գանգատի՞մ որ բեզ իբր վէմ
Յանդգն բարսիբա ս՛անզգալի

Իզմիր 4 Մարտ 1894

Թարգմանեց ընդարձակ
Պ. Ես. ԹԷՔԷՉԵԱՆ

ԱՂԱՒՆԻՆԵՐ

Երբոր կ՛երթամ դիտելու
Աղաւնիներըս հոս՝
Ցուզմուռիմ մ՛անուշ ու տարտամ
Իսբեանս մէջ կ՛զգամ։

Չէ՛, չէ՛, իրու չեմ կրնար,
Ըսատ սկար է իմ բեար,

---

* Բրնդեա կամ ջորնակ · Hanneton ·

Երգելու այդ անապակ,
Թռչուններուն կեանքն ու բարբ։

Իրարմէ միշտ անբաժան՝
Ձայգ ձայգ ուրախ կը խաղան
Գուրգուրալով, ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ,
Համբոյր տալով իրարու։

Ո՛հ, այդ համբոյրն, Աստուած իմ,
Պէտք չէ՞ արդեօք նախանձիմ,
Անոնց համար մի միայն
Ստեղծեցիր արդեօք զայն։

Ո՜հ, այդ համբոյրն, ի՜նչ սէր ջինջ,
Ինչ անապատ գորով, ինչ
Ջերմ կարօտ, ինչ ալ անմեղ
Է այդ համբոյրն սիրագեղ։

Ու, սիրելիս, օր մը թէ
Դարձնայիմ այս վարդէ
Ապրելու կեանքն երկնային,
Իղձերս լցուած կ'ըլլայինն։

13/25 Մարտ 94 ՄԻՀՐՅԱՆ ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ*

Պ. Գասպար Ներսէս Աբէլեան Մոմուխ հայր Թիւրին մէջ « Հայհոյէ ինծի՝ ես ալ հայհոյեմ զքեզ » յօդուածովը Երեմիական ողբեր կ'արձակէ մեր գրականութեան վրայ ու « ամե՛ն հրապարակ, անպտուղ, անծնունդ տարի » կը բացագանչէ։

Ցրտանքին, Ուօլդըր Սքօթ և ուրիշներ իրար կը խառնէ ողբալու համար նաև ժամանակին վրայ, որ կը պակսի իրեն գրականութեան սանձը վարելու իր գրագատականներովն ու քննադատականներովը և մեծ վարպետի մը հովերն առած՝ գրողներու ոմանց Մուսան չնորհագեղ, իսկ ուրիշներունը տգեղ կը գտնէ։

Անկողմնապահութիւնը պարտ կ'դնէ խմբագրութեանս վրայ հրատարակել այդ յօդուածն՝ կանխաւ յայտնելով սակայն որ բերքս անձնականութիւն շօշափող բանակռիւ չէ կարող ընդունիլ։

Ծ. Խ.

«Բանի մը գործեր, իրարու վրայ դիզուած՝ կ'սպասեն իրենց դրադատականին, որ կ'ուշանայ հակառակ փափաքանացս և երբեմնակի խոստմանցս . . .

«Հիմա որ անվտանգութիւնս համարձակօրէն խոստովանեցայ, ալ չեմ յուսար թէ ո և է կերպիւ կրնամ անմեղադրելի (իր բառերով և արդարև չսխալիր ընէմ ես) ըլլալ, ուստի բարեկամ և ոչ-բարեկամ հեղինակաց ներողամտութեանը յանձնարարելով այս տողերը, կուգամ պարտուցս էն վերջինը հատուցանել — գալ տարուան չթողելով առաջինները, այն հինցածներն որ ըստ ռամիկ ասութեան վճարուած իսկ կրնան նկատուիլ։»

Այժ յառաջաբանով գրուած մը երևակայելու է, ո՛րքան ինքնավստահութեամբ պատգամներ կ'որոտայ։

«Ի՞նչ կը նշանակեն այդ վիպամոլ թեոդիկներն, բացատրանչ Որբերեանները և «Ազատարար Ջուգասըղեանները։»

Հեգնական ժպիտ մը ուրելի պատասխան չպիտի ունենայի Պ. Ղեմոյեի եթէ տարօրինակ, ցախաւել տեսակցութիւն մը չստիպեր զիս գրիչ առնել ձեռքս։

Հեգնական ժպիտ մը, այո՛, որովհետև յօդուածագրին քարը սխալ կողմ ուղղուած է կամ լաւ ևս նպատակակէտին չհասած։

Նախ կ'ուզեմ գիտնալ թէ, ի՞նչ ըսել կ'ուզէ «Ազատարար բառով, ու նպատակին չհասնիր անոր համար որ այդ ածականը աւելի կը պատուէ զիս քան կ'անպատուէ, որովհետև ֆրանսայի նշանաւոր գրողներն, ինչպէս Միւռապօ, Վօլթէռ և շատ ուրիշներ ու մեծագոյնը Հիւկօ, ամկապաշտ եղած են։

Սակայն դժբաղդաբար կամ բարեբաղդաբար մենք ազնուական դաս մը չունինք, որ ռամիկ դաս մ'ալ ունենանք և մեր գրողներէ ոմանք «Ազատարար և ուրիշներ ալ «Ազնուարար ըլլան, որոնց պարագլուխը ինքն պիտի ըլլար անշուշտ։ Հետևաբար, բնական էր որ, այսքան տղայական դիտողութեան մը իբր պատասխան ունենայի հեգնական ժպիտ մը և ոչ աւելի։

Գանք տեսակցութեան։

Մեկ երկու բարեկամներու հետ գրատան մը մէջ Պ. Գասպար Ղեմոյեի քննադատութեան վրայ կը խօսէինք երբ . . . ինչպէս առածը կ'ըսէ, «երբ մեկուն վրայ խօսիս կամ դուռն է կամ երդիքը» Պ. քննադատը կ'անցնէր, կանչեցինք։

Հարցուցինք թէ ի՞նչ ըսել կուզէր «Ազատարար կոչելով մեզ։ անակընկալը բաւական չփոթեցուցիչ էր, ուստի անմիջապէս սկսաւ իր ոտքը գրականութեան վրայ, առանց մեր հարցումին մտնէն իսկ անցնելու. միթէ տեղը չէ՞ ըսել « Avocat, passons le déluge »։

Ու պատիպատ խօսքերու լաբիւրինթոսին մէջ սկսաւ մոլորիլ՝ չկրնալով իր ածականին տակէն երևիլ։

Վերջապէս հաղիւ կրցաւ մտքին մէջ դարբնել ու քնարին վրայ երգել հետևեալ բացատրութիւնը։

— Փոխանակ «Ազնիւ ըսելու սրտի կրսեք ռամիկ լեզուով և ասոր նման ուրիշ բառեր կ'գործածէք։

— Ո՞ր գրուածնիս կարդալով այդ թերութիւնը մեր վրայ նշմարած էք։

— Չեմ յիշեր։

Ի՞նչ պատասխան. մինք ալ հիմա կը հարցնենք իրեն թէ, ի՞նչ կրսեն այն քննադատին, որ առանց քովը կամ առջևը ունենալու քննադատելի առարկան և առանց հաստատ համոզումի մը չինելու քննադատելու կելլէ...

Յետոյ աւելի մեծ սխալի մը մէջ ձգտորեցաւ.

— Կարելի է այդ տեսակ բաներ չէք գործածած, եթէ այդպես է, փոխանակ ուրիշի մը ձեր անունը դրած եմ...

Բամնուելէ առաջ ըսաւ,

— Եթէ հրապարակաւ հերքէք, այն ատեն պիտի ստիպուիմ գրուածներնիդ առջևս առնելով մի առ մի ցոյց տալ.

Ի՞նչերը. — Եղբայր չհակցաք ՚ՀՀՀՀ բառերը:

Պ. Գասպար Նէմձէ Թո՛ղ իր խոստումը կատարելու բարեհաճութիւնն ունենայ:

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՊԱՍՐՉԵԱՆ

ԱՐԴԻ ՆՇԱՆԱԻՈՐ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ*

ԵՕՀԱՆ ՊՐԱՄՄ. — Սա ծնաւ ի Համպուրկ, ուր իր հայրը երաժշտական խմբի մը մէջ նուագածու էր: Իր ուսուցմն առաւ Ֆուտարտ Մարքսէնի աշակերտելով և շուտով անուն ստացաւ Շուման զմայլման ընորհիւ: Պրամս՝ Լիրբէ Տէդմօլդի արքունիքն երաժշտական պետ եղաւ և անկից Վիէննա անցաւ, ուր իր բնակարանն ընդ միշտ հաստատեց:

Ի սկզբան Պրամս ֆեբմանական նոր դպրոցին յարեցաւ, բայց վերջէն իր դաղափարներն աւելի դասական ձև մ'առին: Անտարակոյս այժմեան ամենէ անուանի նուագ այարդարներէն մին է Պրամս, թէև այնքան դղրդիչ յաջողութիւն մը չստացաւ: Իր լաւագոյն գործերն որով հռչակ հանած է, երգեր, երկձայնակներ (duet) և համերգներն են, թէև Ռինալդօ և Յաղթականն՝ իրենց տեսակին մէջ՝ իրև ափսոյր թատրերգներ կ'նկատուին:

ԱՆԴՕՆԻՆ ՏՎՕՐԱՔ. — Պրամսն էր որ Անդոնին Տվօրաքն ներկայեց Վիէննայի երաժշտական դպրոցին: Սա Պոհեմիացի մ'է, մանաւանդ մ'օրդին, որու պատուէրը տուած էր հայրը հեռանալէ իր արհեստին: Շատ տարիներ Տվօրաք, որ ծնած է 1841ին

---

* Տես Յոր թիւ, երես 147:

իր ապրուստն ինքնուրոյն հոգաց թատրական խումբերու և սքանչառներու մէջ նուագելով։ Երգեհոնապետի պաշտօն ստացաւ 1873ին Բրակա քաղաքն. նոյն տարին երգ մը յօրինեց Սպիրոկ կիրակի ժառանգորդներն անուամբ, և Աւստրիական կառավարութիւնն անոր թոշակ կապեց։ Բայց այն գործն որով Տվորաք համբաւ հանեց ամեն տեղ Սթապատ Մաթեր է ... որ լատինական ամենէ անուանի օրհներգութեանց հետ կրնայ մրցիլ։

Երկու տարի կայ որ Տվորաք Ամերիկա դնաց ազգային երաժշտարանին տեսչութիւնն ստանձնելու։ Կ'ըսեն թէ երբ սկսաւ իրրև թատրական ջութակահար՝ իր օրապահիկը ճարել, ամիսն միայն ութ տաս ոսկեր կ'չահէր։ Այժմ Նիու-Եորքի մէջ իր տարեկան թոշակն է տասն և հինգ հազար ոսկեր։

ԵԴՈՒԱՐԴ ԿՐԻԿ. — Ժամանակակից նուագահարներու մէջ ամենէ նշանաւորներէն մին է Ե. Կրիկ, որու երաժշտական նուագները միանգամ լսողը բնաւ չմոռնար։ Իր ժէն մի տաղին մէջ բանահիւսական զգացումն իր վսեմագոյն աստիճանին կ'տանի, այն բանահիւսութիւնն որ բարձանց վրայ ապրող ժողովրդեան մը յատուկ է։ Կրիկ ծնաւ Նորվէկիոյ Պէրկէն քաղաքը 1843ին։ Օ.է Պուլ, որ իր մորը մի սիրելի բարեկամն էր, յորդորեց զինք դնալ Լայպցիկ, ուր շարունակեց իր երաժշտական ուսումն՝ աշակերտելով՝ Մօշէլէսի, Հաուդմանի, Ռիչդի և Մէնդէլի։ Անկից անցաւ Գործէնհակ ուր շարունակեց իր դասերը Նիէլս Կատէի հետ։ Բայց Կրիկի կենաց նշանաւոր մի պարագան եղաւ իր մտերմական յարաբերութիւնն Նորվէկիացի Ռիշար Նորդրաքի հետ, որ շատ չանցաւ մեռաւ։

Կրիկ կ'ըսէ Նորդրաքի մասին. — «Սև քողն ընկաւ աչքէս. Նա սորվեցուց ինձ ամենէ առաջ հիւսիսային ժողովրդոց մեղեդիները գնահատել, և իմ բնաւորութեանս գիտակցութեան հասնիլ։ Անհաշտ հակառակորդներ հանդիսացանք Աքանդինավեան թոյլ և անոգի ներդաշնակութեան, որ Կատէ և Մէնտէլսոնի երաժշտութեան մի խառնուրդն էր և նոր խանդով նոր ճամբան հարթեցինք, որու կ'հետևի այժմ Հիւսիսական դպրոցը»։

Վերջէն՝ Կրիկ գնաց Հաուդ և Լիստ հետ մտերմացաւ։ Երաժշտասէր Գերմանիոյ ամեն կողմ մեծ յարգ կ'վայելէ Կրիկ, որու միայն տաղանդը չատ կ'գնահատուի։

ՄԱՐՔՈ ՊՐՈՒՆՈ. — Այսօր դիւցազնական երգերուս առաջնակարգ ներկայիչը կը համարուի Մարքո Պրունո, որ ճայնի յստակ և պարզ դեղեցկութիւն մ'ունի, դեղեցկութիւն զոր եր-

բնչ չզոհեր յանկարծական տասլաւորութիւն մ'ընելու փառասիրութեան։ Իր մեծ գործերն են՝ Ոդիւս., Աբդինոս և Զանեակի երգին։ Թափառական նուագածու եղած է և Պրուխս։ Իր ծննդավայրն է Գօլոնեը, բայց կենաց մեծ մասն անցուցած է ի Պօն և Պէրլին։ Ժամանակ մը Լիվերբուլի երաժշտասէր մեծ Ընկերութեան վերատեսուչն էր։ Տասն չորս տարեկան էր երբ Գոլոնեի մէջ առաջին անգամ ներկայացուց դաշներգութիւն մը (Symphony)*։ Իր պարզասիրութեամբ կ' հեռանայ Գերմանական նոր դպրոցէն և մինչև անգամ Պրամսէն կ'բաժնուի։*

ՐԻՊԻՆՇԴԱՅՆ· — *Այս երաժշտն՝ որուն անունն ամեն կեղանի երաժշտագիրներու ցանկին մէջ պարտի երկիլ, աւելի ծանօթ է իբրև դաշնակահար քան նուագայարդար։ Մի շատ երաժիշտներուն պէս մորմէն առաւ իր առաջին դասերը։ Երբ տակաւին փոքրիկ տղայ մ'էր Ռումանիոյ սահմաններէն, իր ծննդավայր՝ Վէքվօղինէյեն՝ Մոսկուա գնաց որպէսզի դաշնակ սորվի։ Ութ տարեկան էր երբ հրապարակ իջաւ, և տաս տարեկան՝ երբ Բարիզի մէջ սկսաւ նուագել։ Իբրև մանկական հրաշալի՛ մը՝ բոլոր աչքարհ չրջելէն ետև՝ Պերլին դրաւ իր կայանն որպէսզի իր ուսմունքն վերսկսի։ Երբ երկրորդ անգամ մտաւ աշխարհ հրաշալիք մը չէր, այլ զարդացած արուեստագէտ մը։*

Իր օբերաներուն մէջ նշանաւոր են Տիմիտրէ Տոնոյէ, Սկոբելեան ոգեորչները և Նէրոն, դաշնակի համար՝ մի շատ երաժշտական կտորներէ զատ, իր գործերէն մի քանին ցոյց կ'տան որ չտապաւ յօրինուած են, և անոնք աւելի մեծ ընդունելութիւն կ'գտնեն երբոր իր երաշժտական հրաշալի տաղանդին հետ ի հանդէս կ'ելլենն։

ԱՐԹԻՒՐ ՍԼԼԻՎԱՆ· — *Ժամանակիս ամենէ աւելի ծանօթ անգլիացի նուագայարդարն է Սըր Արթիւր Սըլլիվան, որ 1842 ին ծնաւ ի Լոնտոն։ Իր ուսումն սկսաւ Աբբուհի Մատռան մէջ և շարունակեց ի Լայպցիկ։ Ի դարձին Անգլիա 1861 ին փոթորկէ* (Tempest) *տաղը բերաւ, որ Շրիսթըլ Բալէսի մէջ նուագեց։ Սըլլիվան անուն ստացաւ կատակերգական օբերայի մէջ, սակայն իր լաւագոյն գործն է եկեղեցական երաժշտութիւնն։ Անոթակ ոգբէն, օրհներգ մ'որ 1882 ին Ձեսդրի երաժշտական հանդեսին մէջ նուագեցին, մեծ արժանիք ունի, և իր տեսակին մէջ տակաւաթիւ են այն երաժիշտներն որ յաջողած են դաշնակաւոր և պատշաճ օրհներգութիւններ յօրինել։*

ԴԱՄԻՅԻ, ՍԻՆ ՍԱՆՍ·— *Բարիզեան երգչանահար և նուա-*

գայարդար մ'է Սէն Սանս, որու Բէյնէ օբերան մեծ յաջողութիւն գտաւ երբ առաջին անգամ՝ անցեալ տարի՝ ներկայացուցին։ Շուրջ վեթհուն երեք տարեկան է Սանս և ունի գրեթէ բազմաթիւ հոգևոր և աշխարհային երաժշտական գործեր։

ՊԵՏՐԷ ԶԱՅՓՕՎՍԿԻ *. — Այս ռուս արուեստագէտն նոյն երաժշտական համբաւն ունի։ Ամերիկա գնաց երկու տարի առաջ, որպէս զի Գարնէհիի երաժշտարանի բացման ձեռնհաս գտուի։ Նա հանրածանօթ առաջնորդ մ'է ռուսական երաժիշտներու գպրոցին։ Բեզուն նուագ այարդար մ'է և շատ ընտիր գործեր յօրինած է։

Հ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 27 Մարտ 1894

Բաբէկա՛, — Մի՛ գանգատիր. խոստումս մոռցած չեմ։ Միթէ մոռնալի՞ է կինը էակը, մարդուս կողէն ըրդած այդ նեան, որ այսօր վերստին մարդուս կողը մտնելու կ'ճգնի. ո՛չ, պիտի խօսիմ, պիտի չարունակեմ նախորդ գիրս, միայն դու միշտ կը մոռնաս որ այժմ կարծածիդ չափ հեշտ չէ համով հոտով բան մը գրելը, քանի որ մեզ աղն ու պղպեղը կ'պակսին, քան մ'որ սրտի ու մտքի խօսի, քան մ'որ թէ գրողն հասկնայ և թէ կը դացողն։ Այդ բաւական դժուարին պաշտօն մ'է, որ կամ շատ լեցուն կամ շատ պարապ գլուխ մը կ'պահանջէ։ Մերիններն որ կարգէն են չեմ համարձակիր ըսել, միայն այս գիտեմ որ գրիչս ահա կ'սահի միայն երբ սիրուն, փայլուն, յղկուն թղթի վրայ կ'նակի, երբ յստակ, նուրբ ու ճերմակ մելանի մէջ կ'թաթխուի, երբ թևաւոր, հոլային նիւթի վրայ կ'սաւառնի։ Ու կա՞յ միթէ աւելի հովային, զովասուն, հրային նիւթ մը քան կինն, իր մարմինն, իր սիրտն ու միտք։ Երկար ժամանակ՝ ըսի այս, երբեմն ըսի այն, հիմակ կ'ևոջ թէ այս և թէ այն և թէ իմացողու-

---

* Այս գրուած է պ. Զայֆօվսկիի նուագաւոր ցաւալի մահուանէն առաջ։

թիւնը մարդուս կրից, որ միշտ նոյն է, թէև ձև փոխած, սիրոյն, որ միշտ նոյնն է, թէև գոյն փոխած, ուշադրութեան, որ նոր է, առարկաներն եղած են։ Կինն երբեմն հոգի չունէր, այլ միայն մարմին, քիչ շատ չնորհալի, այժմ մարդիկ կ'տեսնեն որ սիրտ ալ ունի, իմացականութիւն ալ ունի, հնարագիտութիւն ալ ունի, ունի նաև հանճար, այս տարբերութեամբ որ այս ամենն այրական վեմի ու աղեցիկ կարողութեանց ղրոշմն զուրկ են։ Եւ կ'ըսէին երբեմն — «Միթէ կինը ծնա՞ծ է, բացի մարդէն, հրաշակերտ մը, գրական, իմաստասիրական, գիտական, արուեստագիտական, միթէ լոյս հանա՞ծ է երբէք Հոմերի, Գանովայի, Ռափայէլի, Պաքօնի, Շէյքսպիրի, Նիւթընի, Հիւկօի նման հանճարներ։ Լեզուանի, փաթիկաստուն, հնարամիտ է, այո՛, կինն, նա մանաւանդ՝ ըստ պարագայի՝ պաշտելի՝ սրահի մը, պարահանդիսի մը, թատերարեմի մը, զարդարանի մը մէջ, բայց ո՞ւր են կին Նիւթըններն, Ռուսօներն, Մէֆիսթոլներն, որ աշխարհի լոյս, փայլակ, կեանք բերին։ Անշուշտ կանացի սեռն ունի մի քանի վեպագիրներ, դիցուհիներ, հուրիներ, վիպասաններ, ունի ժանտարք մը, Ռօլան մը, Նայդ ինկել մը . . . ունի նաև յաւիտենական Սէվինէ մը, Սգաէլ մը, Ժօրժ Սան մը, Էլիօզ մը, զոր չարունակ մեր առջև կ'նետեն իբրև վեհ կարողութեան տիպարներ, ունի մի քանի հնարամիտ քաղաքագէտներ, թադուհիներ, որոց վրայ այնքան կ'ծանրանայ Ս. Միլ իր Հպատակութիւն կանանց գործին մէջ և այնքան ջերմագին կ'պաշտպանէ անոնց ազատագրութեան գատն, զոր կ'պահանջէ փորձն ենթարկել որպէս զի ծագելիք արդիւնքէն վճռական դատաստան մ'արձակուի, մինչդեռ միւս կողմէ Պ. Պըլանդ՝ իր հայրենակիցն՝ կանանց ազատութենէ յառաջ գալիք անպատեհութեանց մասին այնքան սրամտութեամբ կ'խօսի իր մէկ վէպին մէջ։ Այո՛, ճարտար է կինն, նուրբ ըմբռնում, սիրալիր լեզու, սրամիտ գրիչ, հրապուրելի ոճ ունի, սակայն գիւտ մը, մեքենայ մը, լուսեղէն սիւն մը բերա՞ծ է միթէ մարդկութեան։ Ահա խնդիրն. . .» — Է՛հ, մարդն է իր հրաշակերտը, ապաշնորհ մարդն, ագռաւն որ կ'կրծէ իր ծնողին սիրտը » կ'գոչէ ընկեցիկ կինն, վրէժխնդիր կինն, դարուս կինն։

Եւ այս չէ միայն, և կինն է նաև գրիչ, հնարիչ, էտըսընի ոսոխն, երկնային հրոյն թագուն աւանդապահն։

Եւ ինչպէս։ Դիւրին է հաստատել. վասն զի եթէ ոչ համոզմանս պարտքն քաղաքավարութեան հաճոյք մ'է պաշտպա-

նել կինն, որ մարդկային կենաց անբաժանելի ընկերուհին է, բարի գործերու մղիչն, երբ գթասիրտ է և լուսամիտ, և այժմ, ինչպէս կ'կարդամ թերթի մը մէջ, իբր նորածին եւս մը, օձէն անխաթ, լուսով ղեղուն, նորանոր գիւտերու հեղինակ կ'կանգնի եթէ ոչ հին, նոր Աչխարհի մէջ և մեզ հրաչքներ կ'խոստանայ։

Եւ իրօք՝ ի՞նչ կըսէ ամերիկեան թերթ մը — թէ 1790էն ի վեր՝ կիները՝ մինչև ցարդ՝ Միացեալ-Նահանգաց մէջ, երեք հազարէն աւելի գիւտեր ըրած են և տէրութենէ արտօնագիր ստացած։ Ի՞նչ ահռելի յայտնութիւն, որով աչխարհս անուանի այր գտիչներն անչուչտ պիտի չիկնին, իսկ իգական սեռն՝ թմբուկ ի լանջ՝ իրաւունք պիտի ունենայ հռչակել իր մտաւորական եթէ ոչ գերազանցութիւնն հաւասարութիւնը մարդուն հետ։ Հակապատկերն աւելի աչքի կ'զարնէ երբ մօտ առ մօտ բերենք մտովին բեռնակիր վայրի կինն, որ՝ չատ տեղ, քամակն փայտի ծառը տրցակի ներքև ճզմուած՝ կամ մէջքն արօրին լծած, կ'հևայ ու քրտինքը կ'խմէ, և լուսադէմ կինն որ ելեկտրական մարտկոցներու, քիմիական նիւթերու հետ կ'խաղայ՝ հազիւ ժամանակ գտնելով իր սիրականին հետ խաղալու։ Եւ ահա կինն վեր, վեր կ'ելնէ, և ահա մարդս վար, վար կ'իջնէ առ հասարակ, մինչև այն օրն որ մեր սրահներուն թագուհին՝ որ արդէն սիրտերու վրայ կ'տիրէ, մեր գլխին վրայ ալ նստի, թէև ոչ այնքան չնորհալի նիստ, գիտական աչխարհը գրաւելով, և մեր հացը կորզէ մեր ձեռքէն։ Եւ ո՛ գիտէ, ի՞նչ նոր նոր գիւտեր դեռևս պիտի հնարէ, որպէս զի մարդս՝ այժմ հոգեբանական խիստ փափուկ ժամերու մէջ միայն իր ստրուհին, գլխովին գերէ, կեղեքէ զայն, և իրրև չնորհ պարգևէ, չէ թէ ինչ որ սովոր է պարգևել իրրև հզօրագունին հարկ մը, այլ նոյն իսկ բերնին հացը։ Կրկնապատկե՛կ մտաբյկանութիւն մեզ համար։

Եւ ի՞նչ են այն գիւտերն որով կ'պարծի կինն իրրև հնարիչ։ Նայինք։ Սակայն պէ՞տք է մի առ մի թուել։ Մին՝ Մարի Փիկզ անուն, տեսակ մը թելեր կ'հնարէ որ մեռաքսի և յարդի հիւսուածք մ'է. ուրիշ մը՝ Մարի Պրըչ, նորահնար չմակի մը (corset) արտօնագիրը կ'ստանայ։ Նիու-Եորքի սեղանաւորի մը կինն չուանները չինելու համար այնպիսի մեքենայ մը կ'հնարէ, որմէ, դուռ ըսէ, մէկ միլիոնի չափ փրանք կ'գրպանէ։ Աղո՛ր գումար, կտրսընի առաջին գիւտին գնոյն չափ։ Օրիորդ Մօնդկըմըրի կ'ելնէ վարպետութիւնը կ'կատարելագործէ և ար-

տօնագիր կ'ընդունի՝ իբրև չահարեր ձեռնարկ։ Իսկ նոր կատարուն, խօսուն, ինքնաշարժ պէպէկներ, մանկային խաղալիներ հնարողներուն թիւը չկայ։ Կան նաև կիներ որ գտած են, կ'ըսուի, լուացքի գործիներ, որ լուալու տեղ կ'պատռեն լաթը, գըտած են վառարաններ՝ որ ջերմութիւն տալու տեղ մուխ կ'տան, անխորտակելի սեղանի ամաններ, որ կ'խորտակին, ուղղելի օդապարիկներ, որ անուղղայ են, և ուրիշ՝ կանացի բնութեան յատուկ՝ այս գունակ անհամար գիւտեր։ Բայց պարտ է արդար լինիլ։ Կ'գտնուին նաև կիներ որ հազուստներ հնարելու մասին անզուգական են։ Ո՞վ գիտէ՝ վասն զի կինն ու իր ընելիքը միշտ գաղտնիք մը պիտի մնայ, թերևս օր մ'ալ, եթէ արդէն մօտիկ չէ, նորամեութեան վարձանքէն պիտի աղատէ մարդիկն և առանց հագուելու հագուած երևելու հնարը պիտի գտնէ։ Եւ միթէ արդէն չըսի՞ն թէ աղնիւ կին մը հնարած է հագուստի տարազ մը, իր մարմնոյն տարազէն զատ, որ քսան ու չորս տարբեր ձևեր կրնայ առնուլ։ Ի՜նչ թեթևութիւն հայրերու և ամուսիններու քսակին համար։ Արդէն կին մը՝ Մարթա Գօսդէն՝ այնպիսի հիանալի կերպով բաղադրելու յաջողած է այլազան գոյներ որ կերպ մը հեռախօս լեզու մը կ'կազմեն։ Այս է գիշերային նշաններու լեզուն, որ Միացեալ–Նահանգաց մէջ շատ տեղ ի գործ կ'դրուի և կ'կոչուի ֆօսֆընեան նշանը։ Եւ ըստ իս, այդ նոր հնար մը չէ, վասն զի այդպիսի գիշերային նշաններ մեր արևելեան աշխարհի մէջ վաղուց կ'գործածուին և պատուհաններու վերև կամ ստորև գիշերայն կ'երևին, և այդ լեզուն քաջ կ'հասկնան մեր քնաշրջիկ պատանիները։

Այս ամենը, բարեկամ, կ'գրեմ, այն յուսով որ կրնայ գըտիւ մը լինիլ և մեր հայ կանանց հնարագիտութեան շաւղին մէջ մտնելու և հայ ժողովուրդն նորագոյն գիւտերով օժտելու։ Միլիոններ կան գիւտերու ծայրն և ամուսնանալու միջոցներ, միայն կարևորն է միւս, առաջին ծայրը ձեռք ձգել, գիտութեան բաւղին մէջ Արիանէի լարը քան Ապողոնի քնարը, գըտնել, վոխանակ խոհանոցի, մառանի, աւելի, օրորոցի ու մահճի չուրջը մտն գալու, վոխանակ արդուզարդի, պարի, երգի, նուագարանի և գրքի համար հոգի ու չունչ թափելու։ Եւ ի՜նչ աքանչելի տեսարան պիտի ներկայէն մեզ կիներն երբ բաղադրեն ու տարրաղադրեն, երբ մեքենայեն ու քերականեն, երբ գործանոցի մը մէջ իրենց քիմքը, բերանն ու երեսն այլ և այլ քի միական նիւթերով մրսանեն, գոյներու, հիւլէներու ու չոլար–

ներու բնութիւնն իմանան և ոչ միայն հրապուրելու այլ և լուսաւորելու և բարերարելու արուեստը սորվին։ Թերևս այս տաժանելի աշխատութեամբ չատեր չուտով պառաւնան, սակայն պառաւութեան դէմ դեղ ու դարման գտնելու հնարն ալ հանճական գիւտերու կարգէն է, քանի որ այժմ անկարելին կարելի ընելու կ'ջանան գիտուններըւ Եւ իրրև ապացոյց — վասն զի կիներն կարող են չատ բանի երբ կամին, և մանաւանդ երբ գեղեցկութեան և գիտութեան զէնքով սպառազինին — բաւական է ըսել որ արդէն մի քանի օրիորդներ զբաղած են, մին՝ սիրաղուժ երիտասարդներ աչազուրկ ընելու հնարը փնտռել, ուրիշ մը՝ մայրութեան տաղտուկը բառնալու, իսկ երրորդ մը, որ աւելի յանդուգն է, օրիորդ Ֆ . . . ն՝ անչափս զայրացած որ բնութիւնը զինք իգական սեռին մի անդամը ստեղծած է, իր կամաց հակառակ, անքուն կ'ճգնի իր սեռն ի սպառ ջնջելու գաղտնիքը գտնել և կանանց հաղորդել միայն, այնպէս որ մարդ կութիւնը՝ քանի մը սերունդէ ետք, լոկ արական սեռէ կազմուած լինի և կանանց ազատագրութեան խնդիրն ալ ինքնին լուծուի։ Սոսկալի՛ վրէժխնդրութիւն, որ կ'ենթադրէ ապագայի մէջ նաև ջնջումը մարդկային սեռի։ Եւ ի՞նչու զարմանանք. ընկերական ներկայ վիճակի մէջ, ուր այրերը կին և կանայք այր կ'ճկտին լինիլ՝ օրիորդ Ֆ . . . ի խորհուրդն բոլորովին անխորհուրդ չմնար ինձ։

Դեռ ի՞նչեր պիտի տեսնենք, բարեկամ. լաւ է որ մենք կ'անցնինք. թո՛ղ մեր թոռներն՝ եթէ երբէք ունենանք, իրենց գլուխն ճարը նային։

ՇԱՀՆՈՒՐ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ

Ժամանակէ մի՛ վեր տոհմային հաստատութեանց ճեռնտու և չքաւոր դասուն օգնական դտնուելու գովելի հոսանք մը կ'երևի քաղքիս մէջ։ Արդէն կան մի քանի ընկերութիւններ որ յատկապէս այդ պաշտօնին նուիրուած են։

**) Հոֆոպոբ Ընկերութիւնն՝ որ դանազան պատճառներով երկար աւեն ճեռնպահ մնացած էր, տարիէ մի՛ վեր միանալով Ոչքաֆնամ Ընկերութեան հետ սկսած է տասն չորսէ աւելի որբերու իր բարոյական ու նիւթական աջակցութիւնն ընծեռել,*

և յուսալի է որ ազգային հետաքննել ընդլայնելով իր գործն ղդալի արդիւնք յառաջ բերելու յաջողի։

Բ.) Կրթասէր Ընկերութիւնն՝ որ իր Մանկապարտէզ յառաջդիմութեան համար ամեն խնամք կ'տանի և վերջերս իր կազմակերպած պարահանդէսի մէջ ազգասէր կ'խոստանայ աւելի բազմաթիւ թուով աղքատիկ մանուկներու կրթութեան ստար լինիլ։

Գ.) Աղտոտէրաց Ընկերութիւնն՝ որ նոր ու եռանդուն ոյժերու միացմամբ անվհատ յառաջ կ'տանի իր մարդասիրական պաշտօնն և աղքատ ու թշուառ դասուն հիւանդ անհատից ծըրիարար կ'թաչխէ բուժական խնամք ու դեղ։

Դ.) Ընդերցողաց Տնօրէն Խորհուրդն՝ որ գուն կ'գործէ հաստատուն պահելու այդ վաղեմի հաստատութիւնն և որու Յոբելեանն, ինչպէս յայտնի է, վերջերս հոչակելու բաղդն ունեցաւ։

Վերջապէս նորոդ կազմեալ Խնամակալ Տիկնանց Ընկերութիւնն՝ որու ազնիւ ու բանիբուն անդամուհիք առաջադրած են Հոխմսիմեան վարժարանն ներկայ անկեալ վիճակէն վերականգնել, և՝ ինչպէս երբեմն Հոգարար Ընկերութիւնն՝ օգնել ու ուսուցանել աղքատիկ սանուհեաց իրենց անհրաժեշտ եղած առանձին և արհեստական դիտելիք, այնպէս որ դպրոցի սեմէն դուրս կարենան, ի հարկին, պատուաւոր պաշտօն մը կատարել և իրենց ձեռաց արդեամբ կենաց դժուարութեանց դէմ անվհեր մաքառիլ։

Վերջերս բաւական խօսուեցաւ Խնամակալուհի Տիկնանց վերայ, ինչպէս տեղւոյս նոյնպէս և Մայրաքաղաքի օրագրոց մէջ։ Անոնց կողմէ մեծ են Խնամակալ Տիկնանց վրայ կեդրոնացած ակնկալութիւններն և ազգային մէջ օգտաւէտ արդիւնքներ տեսնելու համոզումն բանաւոր, սակայն, միթէ չատ կանխահաս չե՞ն այդ ներքողներն, որոց անշուշտ արժանի պիտի լինի խնամակալութիւնն երբ իրական արդիւնք արտադրէ։ Գործ ազգօգուտ, այս լաւագոյն է։

Փափաքելի էր նաև որ Խնամակալ Տիկնանց ազնիւ ժողովը դծէր որոշակի իր գործունէութեան սահմանն և իր պաշտօնի նպատակն յայտարարէր Արդ Աղդայնոց, կամ Մամլոյ միջոցաւ, և ինչպէս ի լրոյ կ'իմանամ, հրատարակէր Ուսումնական Խորհրդոյ կողմէ իր ժողովոյն ներկայացուած հրահանգներն։

Այս բաւական չէ, Հայ հասարակութիւնն մեծ պէտք ս'ունէր որու կարևորութիւնը հետզհետէ ղդալի կ'դառնար։ Այս անհրաժեշտ պէտքն՝ որ տարիներէ ի վեր կ'զրաղեցնէր մտքերն, վերջապէս իրականութիւն պիտի դտնէ Ընդհ. Մեծաշուք Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Ե. Արտպետի։

Ազնիւ Տիրէնտին վաղուց կ'տածէր օգտաշատ խորհուրդ մը՝ այս է արհեստանոց մը չինելու խորհուրդն՝ որ զանազան պատճառներով ցարդ անիրանալի կ'մնար։ Արդ՝ կ'իմանանք ուրախ սրտիւ, որ Մեծաշուք Արտպետեան Տիրէնտի արդէն որոշած է,

խորհրդակցութեամբ Պատ. Ուսումն. Խորհրդոյ, Արհեստանոցի յատակագիծն պատրաստել տալ, և յուսալի է որ Ջատկական տօներէն յետոյ անոր հիմնարկութեան ներկայ գտնուելու բարերաղդութիւնը պիտի ունենայ տեղւոյս Հայ Հասարակութիւնն։

Առայժմ այս աւետաբեր լուրն բաւ կ'համարինք։ Անշուշտ վերջն աւելի երկար գրելու բաղդն պիտի ունենանք Աբաջեան Արհեստանոցի մասին։

Հ. Մ.

ԼՐԱԲԵՐ

ՖՐԱՆՍԱՅի ազգային ժողովը կ'մերժէ 1875ի Սահմանադրութեան վերաքննութեան առաջարկներն՝ որ Պ. Պուրժուայի և Նագլի կողմէ եղած են, առարկելով թէ աննպատակ են ժամանակներն, նոյնպէս կամ կ'մնայ Մերակոյան ի սպառ բառնալու կամ լոկ վէտօի իրաւունքով զայն արձանագրող ժողով մ'ընելու Պ. Տոպլէի առաջարկն։ Իսկ իր գաղթային գործոց տեսչութեան համար նոր անջատ պաշտօնէութիւն մը կ'հաստատէ, զոր ցարդ նաւային գործոց պաշտօնատունը կ'վարէր։ Մէկ կողմէ ԱՆԳԼԻԱ գաղթային կոխուներն, յԱմերիկէ, կ'չարուներէ, միւս կողմէ ընկերային ծանր խնդիրներ կ'յուզէ։ Պ. Կլատսթօն որ իր ընտրողներու յայտարարած է թէ չպիտի կարենայ այսուհետև վարել իր երեսփոխանական պաշտօնն՝ աչաց տակ առնելով Իրլանտական ազգային կուսակցութեան կողմէ կ'ամբաստանուիլ իբրև մատնտու, թէև ալևոր մեծ քաղաքագէտն կը պնդէ թէ պարտ է Իրլանտայի խնդիրն՝ ըստ արդարութեան լուծել, որպէս զի Բրիտանիա աւելի անդորր մտօք լուծելու յաջողի ընկերական խնդիրներ՝ որ անհրաժեշտ են ժողովրդեան բարօրութեան համար։ Նոյն կարծիքը կ'յայտնէ և Լորտ Ռոզպէրի՝ այս տարերութեամբ որ չփոփոխելիր հիմնական փոփոխմունք մուծել սահմանադրական հիմնարկութեանց մէջ, այլ պաշտօնական բարւոքումներ՝ նոյն իսկ լորտերու ժողովին մէջ։ Սակայն դինւորական և նաւային արտասովոր ծախուց պատճառաւ 1894–95 չրջանի եկամտոյցն 96,632,666 անգ. ոսկւոյ պիտի ելնէ, գումար մ'որ Անգլիոյ եկամտական պատմութեան մէջ առաջին անգամ այսքան ուռեալ է։ Գերմանական թերթ մը շատ ուշագրաւ յօդուած մ'ունի որ Հէնրիխ Կիփքէնի՝ «Ֆրեարիկ կայսեր յիշատակներու հրատարակչի» բանբուն գրչէն է, Անգլիոյ կացութեան վրայ. — Գաղթային է լիովին կ'լսէ պատմաբան յօդուածագիրն, Անգլիական մեծ պե-

տութիւնը, որ համեմատաբար նորակազմ է և պինուց արդիւնքը։ Սպանիոյ, Հոլանտայի և Ֆրանսայի վնասով Անգլիա հասաւ այդ դերակշիռ բարձրութեան 18րդ դարու մէջև։ Վերջերս Ֆրանսա որոշեց Հնդկական պետութիւն մը կազմել և արևելեան Սիամի դրաւումն այս ուղղութեամբ նշանաւոր քայլ մ'եղաւ և Անգլիական նաւային բարձր դիրքը վտանգութիւն մը կրեց։ Տնտեսապէս Ֆրանսայի Հնդկաչինական պետութիւնն մեծ արժէք մը չունի, սակայն զինուորական ու քաղաքական տեսակետով, մեծ կարևորութիւն ստացաւ։ Անգլիա կրնայ դիմագրաւել Ֆրանսայի և Ռուսիոյ զատ զատ, սակայն կասկածելի է որ այս երկու տէրութեանց միացեալ զօրութեան կարենայ դիմադրել։ Անտարակոյս երբեակ դաշնակցութիւն Անգլիոյ սիրոյն համար՝ ըստ առածի, չադանակը կրակէն չպիտի հանէ։ Ուստի Մեծն Բրիտանիա պարտի իր նաւատորմին վրայ դնել իր բոլոր յոյսը։ Այդ նաւատորմը մաս մաս բաժնուած է աշխարհիս չորս կողմն, բաժանում որ անհրաժեշտ է իր առևտրական նաւերուն պաշտպանութեան համար։ Ֆրանսա և Ռուսիա չատ զօրացուցին իրենց նաւատորմիղներն և ձեռնհաս անձինք Անգլիոյ առաւելակշռութիւնն կասկածելի կ'նկատեն։ Անգլիական նաւերը բազմաթիւ են և՝ ըստ որակի՝ չատ լաւ, բայց նաւատորմիղ մը չէ թէ միայն նաւերու այլ նպատակ կարօտ է։» Ապա յօդուածագիրը կ'նշանակէ Անգլիոյ կամաւոր զինուորագրութեան դըրութիւնն, որով կարելի չէ քաջալարժ նաւաստիներ ունենալ, ինչպէս ունին միւս ազգերն պարտաւորիչ ծառայութեան շնորհիւ։ Իրաւ հարուստ է Անգլիա, սակայն երբ հարկը պահանջէ, ժամանակ չպիտի ունենայ մարդիկ պատրաստելու մարզելը ևթէ միայն Անգլիա երկու նաւամարտներ կորուսէ Միջերկրականի մէջ՝ Շուէզի ջրանցքն ձեռքէն պիտի ելնէ և հետևապէս դէպ ի Հնդկաստան կարճագոյն ճամբան։ Ուստի Անգլիա ստիպուած է իր նաւային զօրութեան հոգը տանիլ, այս ևս ներքին քաղաքականութենէ կախում ունի։ Իր մեծ տէրութիւնը կ'պարտաւորի իր աղնուապետական դասակարգին, որ կարող և յարմար է ղայն կառավարելու։ Այդ աղնուապետութիւնն այլ ևս չիշխեր Անգլիոյ վրայ։ Հանրավարութիւնն իր տեղը բռնեց։ Հասարակաց կարծեաց մէջ յանկարծական փոփոխութեամբ խնամք պատրաստուած ամեն հաշիւներ կրնան վեր ի վայր շրջել։ Իր Բարլմէնդը կարևոր դիրքէն ընկաւ։ ստորին դասակարգը կ'իշխէ, և այդ իշխանութիւնն լաւագոյններէն չէ։ քաղաքական չահերը չեն որ ռամիկը կ'յուզեն այլ դասակարգի չահերը։ Միթէ ժողովրդը կարող է խնամել որ Անգլիոյ գոյութիւնն իր ծովային երապետութենէ կախում ունի։ Այս է խնդիրը։ Անգլիոյ անկումն իր Բարլմէնդի անկմամբ կրնայ տեղի ունենալ։

ԳՍԱՆՉԻՆԳԱՄԵԱՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏԱՆ ՀԱՄԻՒՆԻՈՅ
ՌՈՒՍԻԱ
ՌՈՒՍԻԱ
ՌՈՒՍԻԱ

փափաքելի վիճակի մէջ կը պատրաստեն և Ընթերցատունը իւր դռները առաջին անգամ կը բանայ ժողովրդեան, կատարեալ կազմակերպեալ և ընտիր վիճակի մէջ թէ ի մասին այլ և այլ լրագրաց և թէ բազմահատոր ընտիր ընտիր գիրքերու, որոց մեծագոյն մասն գրեթէ ամբողջն անհատական նուէրներ էին միայն։ Ընթերցատան գոյութիւն ունենալէ ի վեր նորա թէ նիւթական և թէ բարոյական տեսակէտով ամենէ փայլուն ժամանակամիջոցն պարտինք համարիլ առաջին երկու երեք տարիներն, ուր մէկ կողմանէ հասոյթք առատութեամբ կը զեղուն Ընթերցատան արկղին մէջ և միւս կողմանէ կրթական և ուսումնական խնդրոց վրայ վիճաբանութիւնք և ճառախօսութիւնք անօրինակ հրապոյր մի կը ներշնչեն ընդհանուր հասարակութեան ամեն տեսակ զբօսանք մէկ կողմ թողլով խուռներամ ամեն գիշեր անդ դիմելու։

Բայց մարդկային ամեն գործեր մշտապէս բարեյաջող վիճակ մի չեն կարող ունենալ, այսպէս ալ Ընթերցատան այս փայլուն վիճակն չատ չուտ կսկսի մթագնիլ և պէտք է անկեղծաբար խոստովանիլ, որ առաւելապէս նոյն ժամանակի զայն վարող ժողովոյ անհեռատեսութեամբ։ Եւ արդարև երբ ի նկատի առնունք որ նախորդ երկու երեք տարիներու մէջ Ընթերցատան տարեկան հասոյթն կը հասնէր 30000 ի և միւս կողմանէ մտածենք որ այս գումարն ամբողջովին կը ծախսուէր, այն ատեն չատ հեշտիւ սա եզրակացութեան կը յանգինք թէ, նոյն ժամանակի Գործադիր ժողովոյ անդամք՝ որքան որ արտով, զգացմամբ և ուսումնական արժանեօք ամեն կասկածներէ գեր ի վեր՝ այսու ամենայնիւ անհեռատես գտնուած են իրենց ձեռք անցած բարեյաջող առիթներէ օգուտ քաղելու և զայս չատ կարելի էր գործադրել եթէ հեռատեսութեամբ և խոհեմութեամբ ընթանային իրենց ծախսուց մէջ և այս կերպիւ ամեն տարի գումար մը դնէին ի պահեստի, որով քանի մը տարուան մէջ չատ դիւրաւ պիտի կրնային օժտել Ընթերցատունը իրեն յատուկ սեպհական չէնքով մի. քանի որ փորձը ցոյց տուաւ յետագայ տարեաց մէջ թէ Ընթերցատան վարձատրին ամեն ժամանակ եղած է քար գայթակղութեան և արգելք նորա յառաջդիմութեան և բարւոք վարչութեան։ Այս կարճ ժամանակամիջոցէ յետոյ հասոյթք կսկսին նուազիլ, Ընթերցատունն չամաչ կը մատնուի դրամական անձկութեանց, հետզհետէ դիրար յաջորդող գործադ իր ժողովք մարդ կօրէն հնար եղածն ի գործ կը դնեն Ընթերցատան նիւթական վիճակը բարւոքելու, այլ ամեն անդամ նիւթական անձկութեան առջև յուսահատ կտիպուհին տեղի տալ առաւել խիզախ և վստահ անձերու չանձնելով նոյնին վարչութիւնը։ Սոքա կսկսին կորովով և քիչ ժամանակ յետոյ իրենք իսկ զգալով յուսախաբ լինելնին տեղի կուտան ուրիշներու այսպէս երկար տարեաց չրջաններու մէջ Ընթերցատունն առ խարխափս կը դիմէ չէնքէ ի չէնք փոխադրուե-

լով և գրեթէ միշտ աւելի հակամէտ մեռնելու քան թէ ապրելու և ապրելով իւր շուրջ սփռելու իմացական կեանք լոյս և յառաջդիմութիւն։ Կուգայ աղետալի ժամանակ մ՚ալ որ Ընթերցատուները կը փակուի դարձեալ նիւթական անկութիւններէ ստիպեալ, զուրկ գործադիր ժողովէ, որ հրաժարած է առանց յաջորդ մի ընտրելու, զուրկ սպասաւորէ, զուրկ լրագիրներէ և նիւթական ամենատարրական միջոցներէ, և սակայն այս ամեն տագնապալի ժամանակներու մէջ Բաբգէեան Յովհաննէս էֆ. յաճախ միացած Կոստանեան Փալուստ էֆ.ի և այլ ականաւոր անձանց անմիջապէս կը դիմեն յօգնութիւն և նիւթական կամ բարոյական ամեն արգելքներ բառնալով անձնական զոհողութիւններով վերստին կը բանան կամ կանոնաւոր ընթացքի մը մէջ կը դնեն Ընթերցատունը, որ սակայն անցողակի յայտնել հարկ է թէ այսպիսի ժամանակամիջոցներու մէջ չատ անգամ ընթացիկ տարւոյն ծախքերը դոցելու համար կտրիլուի յաջորդ տարուան եկամուտները հաւաքել և ծախսել և ըստ այնմ կերպիւ իւիք, եթէ կարելի է ըսել, թէ դրամագլուխը կուտէ և թէ միանգամայն մշտապէս պարտքի ներքև կը գտնուի։

Ընթերցատանս երկարամեայ գոյութեան և փիճակին նըկատմամբ սոյն հակիրճ տեսութիւնն ընելէ յետոյ՝ կը յայտնենք թէ ներկայ Գործադիր ժողովը երեք տարիէ ի վեր ստանձնած է Ընթերցատան վարչութիւնն։ Սոյն երեք տարուան միջոցի մէջ Ընթերցատան ստացած փայլուն վիճակին և հետզհետէ բարգաւաճման մասին փաստաբանելն մեզ անկ չհամարելով կը թողունք որ Ձիւռնիոյ Պատուարժան Հայ Հասարակութիւնն ինքնին դիտէ և դատէ և մենք կանցնինք Արգոյ Հանգիսակատարութեան տալ ուրիշ շահագրգիռ տեղեկութիւններ։

Երախտագիտական աւագ պարտականութիւն կը համարինք մեզ, նախ աստ յիշատակել այն պատուական Անձանց անուններն՝ որք այլ և այլ պարագայից մէջ քաջալերական համակրանքի դրուխիւններով և ընտիր դիրքերու նուիրմամբ Ընթերցատան երկարամեայ չրջանին մէջ թէ զիրար յաջորդող Գործադիր ժողովները խրախուսած, քաջալերած և թէ միանգամայն սոյն հաստատութեան մատենադարանը ճոխացուցած և ամեն տեսակէտով օգտակար և նախանձելի վիճակի մը հասուցած են։ Կղերականաց դասէն լինելով հետզհետէ մեր տեսութեան կը ներկայէին Հանգուցեալ Վեհ. Մակար Կաթողիկոս, Հանգուցեալ Եսայի Պատրիարքն Երուսաղէմի, Արմաշու Պատուարժան Միաբանութիւնն, բազմարդիւն Միաբանութիւնն Մխիթարեանց Վենետիկի և Վիէննայի, որոնց եղած դիմումը ամենայն յօժարակամութեամբ, ամենայն վեհանձնութեամբ միշտ և միշտ նկատողութեան առնուած են և որոց յաւերժաբար կը պարտինք յարգական լուռի երախտագիտութիւն։ Աչխարհականաց դասէն լինելով Ընթերցատանս բարերարաց մէջ առաջին տեղին կը դրաւէ Մեծ. Գարեգին էֆ.

Բարաղեան, դի ոչ թէ միայն մատենիւք, դրամով լրագրովք և նիւթական այլ և այլ զոհողութեամբք բարերար հաղիսացած է հատատուութեանս՝ այլ և հարկ է երախտագիտութեամբ խոստովանիլ որ իւր բարոյական պաշտպանութիւնն, հոգատարութիւնն և Ընթերցատան յառաջդիմութեան համար տածած անդուլ սէրն յաճախ մեծ կչիռ ունեցած է անձկոտ ժամանակներու մէջ Ընթերցատան բուն իսկ գոյութեան խնդրոյ տեսակէտով։ Եթէ այս պատուական Անձին հսկողութիւնն և պաշտպանութիւնն անընդհատ կերպիւ վայելելու բաղդը չունենայինք վաղուց իվեր Ընթերցատունս փակուած կըլլար և մեզմէ չատերն թերևս անդէտ իսկ պիտի ըլլային թէ Զմիւռնիոյ մէջ Հայ Ընթերցատան մը գոյութիւն ունեցած էժամանակ։

Ապա Ընթերցատանս նիւթապէս և բարոյապէս սատար և պաշտպան հանդիսացող բազմաթիւ անձանց մէջ նշանաւոր տեղի կը բռնեն Հանգուցեալ Տրք. Յակոբ և Յովհաննէս էֆէնտիք Սպարթալեան ազգային Բարերարք, Հանգուցեալ Վսեմ. Թագուոր Բաշա Յակոբեան, որ քսանամեայ միջոցի մէջ, մինչև իւր ողբալի մահն տարեկան հինգ և երբեմն ութ ոսկի անընդհատ վճարած է, և որ՝ Զմիւռնիացի լինելով իւր ծննդավայրին ազգակցաց չատ անգամ իվնասանավայել նուէրներով նպաստած է թէ յօգուտ հիւանդանոցին և թէ ընդհանուր հասարակութեան, նոյնպէս իր եղբայրն Մեծայարգ Մարդար աղա Յակոբեան որ բաւական թուով դպրիերէն ընտիր գիրքեր նուիրելէն զատ երկար տարիներ հարիւր ֆրանք նպաստ կը ղրկէր։

Դարմանալ հիւտալէս օգնած են Տէարք Յովսէփ Զէլէպի Եուսուֆեան, Եսայեան եղբարք, մասնաւորապէս Գէորգ և Դուկաս էֆէնտիք. Մեծաչուք Մատթէոս էֆ. Պալիոզեան, Մեծաչուք Կարապետ էֆ. Ասրատեան և տակաւին կրթութեան և լուսաւորութեան ճշմարիտ բարեկամ եղող բազմաթիւ անձեր, որոնց անուանքը մի առ մի ատո նշանակելն չատ երկար կը լինի, և որք տակաւն խնամով արձանագրուած են Ընթերցատան տուփարին մէջ իրենց ընթացից նկատող ամեն մանրամասնութեամբ, իրր յաւերժական յիշատակ իրենց սիրելի անուանց։

Ասոնցմէ ոմանք, ինչպէս Տէարք Բարիզեան Յովհաննէս էֆ. իւր հանգուցեալ ամուսնին Տիկին Լիւսի, Տէարք Եսայեան, և այլք Ընթերցատանս սկիզբէ ցարդ գործ չեն իրենց անձնական ծախիւք երապարակ այլ և այլ ընտիր լրագրովք օժտել սոյն հաստատութիւնն։ Նոյնպէս խորին երախտագիտութեամբ կը յիշատակենք Հարգափայլ Տիկին Տիրուհի Պետրոս Եուսուֆեանի անունը, զի այս քաջակիրթ ազնուական Տիկինն բարեհաճած է օժտել Ընթերցատունն դպղրիերէն դասական բազմահատոր և ծանրագին գրքերով։ Կը յայտնենք մեր շնորհակալիքը նոյնպէս ազգային Պատուարժան խմբագրաց, որոնցմէ չատերն իւրեանց հրատարակած թերթերէ ձրիաբար նուիրած

են սոյն հաստատութեան։ Քաղաքիս մէջ հրատարակեալ օտար լրագրաց խմբագիրք ևս մեծ մասամբ իւրեանց թերթերու նուիրմամբ պատուած են Ընթերցատունն

Ընթերցատանս թէ հիմնադիրներէ թէ սատար հանդիսացողներէ չատեր արդէն հանդչած են ի յաւերժութեան, բայց այս բնաւ պատճառ մը չկրնար ըլլալ զիրենք մոռացութեան մէջ ձգելու։ Նոցա հոգւոյն յաւիտենական հանդիստ մաղթելէ և իրենց յիշատակին ամենանկեղծ և սրտագին երախտագիտութիւն արտայայտելէ յետոյ՝ կը հայցենք որ բարձրեալն Աստուած ողջ մնացողներու չնորհէ դեռ բազմաթիւ ուրախ և երջանիկ տարիներ և իրեք թէ հաճոյքն ունենան տեսնելու սոյն հաստատութեան յիսնամեակն ևս, միտասէս իրենց հովանաւորութիւնն և նիւթական և բարոյական աջակցութիւնն անպակաս ընծայելով Ընթերցատանս վրայէ։

Կանցնինք այժմ ուրիշ կարևորագոյն և նուիրական պարտաւորութիւն մը կատարել յիշատակելով աստ ամենախոնարհ սրտիւ և երախտագէտ զգացմամբ մեր ժողովրդասէր և յառաջդիմասէր լուսամիտ կայսեր Սուլթան Ապտիւլ Համիտ Խանի փառապանծ անունը։

Նորա երջանիկ գահակալութեան թուականը պարտինք նաև համարել Տաճկաստանի բոլոր ժողովրդոց բարոյական իմացական և նիւթական բարգաւաճման թուականն ուր իւր ընդարձակ Կայսրութեան ճակատագրին, իր Օգոստափառ ձեռքն առած կ'առաջնորդէ իւր հաւատարիմ և երախտագէտ ժողովուրդը դէպ ի բարօրութիւն, բարգաւառում և երջանկութիւն։ Իւր երկրին ամեն կողմ բանալով հետզհետէ կրթական հոյակապ հաստատութիւններ և մղում տալով դիտական, արուեստական և այլ հանրօգուտ բոլոր ձեռնարկներու։

Արդարև Օսմանեան փառապանծ կայսրութիւնն անցելոյն մէջ ոչ մի ժամանակ դիտութեանց և ճարտարարուեստի սեսակէտով այսքան հսկայ յառաջդիմութիւն մը ըրած է, որքան ըրած է և կ'ընէ ներկայ Օգոստափառ վեհապետին գահակալութենէ ի վեր։ Հապա, իւր դարաւոր հաւատարիմ և երախտապարտ հպատակքս ալ չատ կը պարտինք Նորին վեհափառութեան հայրական հոգածու խնամոց, և որոյ փոխան անհրաժեշտ պարտաւորութիւն ունինք միշտ արիւնատութիւն հայցել Աստուծմէ Նորին վեհափառութեան թանկագին կենաց համար։

Թողլով Զմիւռնիոյ ամեն ազգի և ամեն դասակարգի ժողովրդոց որ իրենց երախտագիտական զգացումներն յայտնեն քաղաքիս ընդհանուր կառավարիչ քաջ օրկնագէտ և քաղաքագէտ վեհամտիայլ Հասան Ֆէհմի փաշային, ըսեն իսկ ընթերցողները ալ աւագ պարտաւորութիւն կ'ըզգայ իւր կողմանէ իսկ արտայայտել ամենախորհին երախտագիտութիւնն առ այս ականատես պաշտօնեային վեհափառ Սուլթանին, որի ընթերցա-

տունս ամեն անգամ որ դրամական անճկութեան պատճառաւ պէտք կ'ըզգայ արտաքոյ կարգի միջոցներու դիմել հասոյթ հայթայթելու համար, և կտիպուլի Նորին Վսեմութեան բարձր պաշտպանութիւնը և արտօնութիւնը հայցել թատերական ներկայացմանց և այլ հանդիսից առթիւ՝ միշտ և միշտ մեր խոնարհ դիմումներն Նորին Վսեմութեան կողմանէ արժանացած են բարեհամ հաւանութեան։ Արդարև Ձմիւռնիացիքս առ հասարակ երջանիկ պարտիմք համարել զմեզ մի այսպիսի լուսամիտ և կրթասէր Կուսակալի հովանաւորութեան ներքև գտնուելնուս համար։

Ընթերցատանս բարերար և պաշտպան հանդիսացող անձանց նկատմամբ մեր շնորհակալեաց արտայայտութիւնքը պիտի միակենք սոյն կարգի պարտաւորութիւն մի ևս կատարելով առ Գեր. Տ. Ներսէս Ծ. Վ. Արսլանեան արժանընտիր Առաջնորդ Ձմիւռնոյ, զի ամեն առթի մէջ, միշտ Ձեր Գերապատուութիւնն սիրայօժար կերպիւ նուիրած է իւր բարձր պաշտպանութիւնն սոյն հաստատութեան օգտին և յառաջդիմութեան համար. թէ այն պարագային՝ ուր հարկ կը լինի Վսեմափայլ Կուսակալին դիմում ընել և թէ այլ տարբեր դժուարութեանց առթիւ։ Կը հայցեմք ամենախոնարհ կերպիւ, Սրբազան հայր, որ հաճիք Ձեր այդ թանկագին պաշտպանութիւնն և հովանաւորութիւնն ընդ միշտ անպակաս ընել սոյն ամեն տեսակէտով օգտակար հաստատութեան վրայէ։

Գանք այժմ հարևանցի ակնարկ մի նետել Ընթերցատան և դպրոցի, ազգին հանդէպ կատարած դերերու նկատմամբ և այս երկուքին մի ամփոփ զուգակշիռն ընել։ Դպրոցն կուտայ ազգային մանկտւոյն սահմանափակ դաստիարակութիւն սահմանափակ տարիք ունեցողներու, միայն պատանեաց այլ Ընթերցատունն կուտայ ուսումնական՝ բարոյական և արուեստագիտական անհուն և անսահման ծանօթութիւններ և հմտութիւններ ամեն դասակարգի և ամեն հասակի անձանց հաւասարապէս։ Հոն մանկտին դպրոցի մէջ իւր ընդունած ուսմանց ծաւալն կընդարձակէ, բարոյական, դիտական և արուեստական սքանչելի ծանօթութիւններ կը մէթերէ իւր սրտին և մտաց մէջ թէ ամենօրեայ թարմ լրագիրներէ և թէ մատենադարանին ճոխ գիրքերէ ուր 3000 հատորներ այլ և այլ լեզուաւ ամեն ժամանակաւ իր արտադրութեան ներքև կը գտնուին։ Հասակաւորն հոն իր արուեստին, իր ճաշակին յարմար հրահանգիչ գրօսանք մը կը գտնէ, կ'ստանայ նաև աչխարհի ամեն կողմ տեղի ունեցած իրաց և դիպաց մասին լիուլի տեղեկութիւն, այնպէս որ Ընթերցատան սրահին մէջ աթոռի մը վրայ նստած գրեթէ բոլոր աչխարհն կը ճամբորդէ, և որ աւելին է իւր բարոյականը կը զօրանայ, կ'ըզգայ հեռչհետէ գարչանք մը մոլութիւններէ, արբեցողութենէ և այլ վնասակար և անպատուաւոր ունակութիւններէ։ Կ'սկսի սոյն բարերար հաստատութեան ազ-

դէպ ութեան ներքև զգալ իբրև մարդ, իբրև հայ և իբրև հա-
ւատարիմ հպատակ իւր պարտաւորութիւններն առ Աղգն, առ
ընդհանուր մարդկութիւն և առ վեհափառ կայսրն, որոյ հա-
ւատարիմ հպատակ լինելն կը համարի անչուշտ իր մեծագոյն
փառքն ու երջանկութիւնը: Ծերունին ևս չատ հրահանգիչ և
անմեղ զբօսանք մի կը գտնէ սոյն պատուական հաստատու-
թեան յարկին ներքև, և որ յամախելով անգործութեան ու
ծերութեան առթած տաղտկալի ժամերն կը սահեցնէ օգտակա-
րին հետ խառն հաճելի կերպիւ: Բայց Ընթերցատան Զմիւռնիոյ
Հայոց մէջ կատարած դերի մասին թողունք որ Ընթերցատունն
ինք խօսի և մեր այսուհետև արտասանելիքներն Պատուարժան
Հանդիսականքդ պարտին համարիլ դիմառաբար, այսինքն յա-
նուն Ընթերցատան:

Տեսեք ի՞նչ կըսէ Ընթերցատունն « Ես քսան և հինգ տարիէ
իվեր գոյութիւն ունեցած եմ Ձեր մէջ, այսքան միջոցի մէջ
քանի մը սերունդներ կրթած եմ, ես Ձեր հայրերու, ձեզ և
ձեր զաւակաց ցոյց տուած եմ՝ իբր ճշմարիտ և քաղաքակիրթ
մարդ՝ իրենց ընթանալիք ուղին, զՁեզ խորչեցուցած եմ մոլու-
թիւններէ, ցոյց տալով առաքինութեան և անպիւտ բարոյա-
կանի գեր ի վեր լինելն ամէն անոտիքներէ, պերճանքէ և մոլութիւններէ: Ձեր ամենու և մանաւորաբար ման-
կտւոյն և հասակաւորաց միտքը ճոխացուցած, սիրտը ազնուա-
ցուցած և իրենց գրագիտական ճաշակը յղկած և բարգաւա-
ճած եմ: Իմ ծոցս յաճախողներէ ոչ մին հնար է որ անբարոյ-
ական, աբբեցող կամ յոռի լինի. դի սեմէս ներս մտնողն ան-
միջապէս պիտի գտնէ այս ամէն մոլութեանց դէմ յաղթա-
նակելու ամէն կարևոր միջոցներ և պայմաններ: Իմ Ձեզ չը-
նորհած այսքան բարութեանց փոխարէն ինձ ի՞նչ ըրիք: Այսօր,
որ գոյութեանս քսան և հինգ ամեակը կը տօնէք՝ այսօր ուրիշ
բան չունիմ Ձեզ յայտնելու, բայց եթէ իրաւացի գանգատ մի
Ձեր ինձ չնորհած այն խեղճ ու կրակ աննուղին համար՝ որով
հպարտ ուրեմն կըզգայի թէ հիւանդապին գոյութիւն մի ունիմ
Ձեր մէջ: Քսան և հինգ տարուան միջոցի մէջ դեռ կարող չե-
ղած եմ ինձ սեպհական չէնք մը ունենալ և աստանդական
հիւանդանոցի պէս վայրէ ի վայր փոխադրած էք զիս, եկաւ
ժամանակ մ'ալ, սոսկալի ժամանակ մի, որ իմ կամքիս հակա-
ռակ իբր մեռեալ գիս դագաղի մը մէջ դրիք, կափարիչս գա-
մեցիք, և մերձ էիք գերեզմանի անդնդոց մէջ նետել եթէ լու-
սաւորութեան ճշմարիտ բարեկամներ ժամանակին օգնութեան

չխոթային և նոյն անախորժ վիճակէ դիս չազատէին։ Երբ Ձեզ յայտնեմ որ գոյութիւն ունենալէս ցարդ մօտ 700 ոսկւոյ չափ գումար մը ծախսուած է միայն իբր չէնքի վարձագին, պիտի ապշիք անշուշտ, բայց Ձեր զարմանքն առաւել պիտի աճի երբ յայտնեմ որ չէ թէ միայն այս Ձեր կողմանէ յոռի տնտեսագիտութիւն մի ցոյց կոտայ, այլ և սոյն գումարին կէսով ալ շատ հեշտ պիտի ըլլար ամեն կերպիւ ինձ յարմար, ինձ սեպհական գրեթէ պալատի մը մէջ տալիլ։ Իմ ունեցած յոյժ համեստ հասոյթներուս մէկ երրորդն և երբեմն գրեթէ կէսն միշտ և միշտ տրուած է բնակութեան իբր վարձագին և այսպէս անկապոզութեան դատապարտուած եմ, առաւել օգտակար, առաւել նախանձելի և առաւել պատուարեր վիճակ մը ունենալու, թէև այս հիւանդագին վիճակի մէջ իսկ իմ ընձեռնած օգուտներս գեր ի վեր են, իսկ ի՞նչ հրաշքներ չեմ կարող ի հանդէս բերել եթէ դիս ապատէք միանգամայն ընդ միշտ վարձագին վճարելու դժնդակ հարկէն։ Այսօր ուրեմն, սոյն յորելեանիս առթիւ, ձեզմէ կը խնդրեմ չէ թէ դովեստներ և ներբողներ իմ գործոց մասին՝ այլ ձեր կամաւոր սրտաբուխ և աղնիւ օժանդակութիւնը դիս ինձ սեպհական յատուկ չէնքով մի օժտելու։ Պիտի դիտեմ այս առթիւ կատարեալ վստահ կերպիւ ձեր ամենու ուղղամտութեան և խղճին և մեծ յոյս ունիմ որ չետ այսորիկ ամեն ոք զգալով կրթական հաստատութեան մը քաղցրութիւն օգուտներն, սիրայօժար պիտի նպաստեն անոր յառաջդիմութեան և յարատեւութեան փափաքելով։

6/18 Փետրվար 1894
Զմիւռնիա

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀ. ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

Առեւտրական	ՏԻՐԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Առեւտրական	ՍՈՒՐ Յ. ԹՕԳԱԼԵԱՆ
Գանձապետ	ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՋՏԱՂԵԱՆ
Թանգարանապետ	ԱՒԵՏԻՍ ԱՄԻՐԱՅԵԱՆ
	ԳՐԻԳՈՐ ՊՕՅԱՃԵԱՆ
	ՄԱՐԳԱՐ ՄԻՐՋԱ
	ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՈՒՆՃԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Իմմիրի համար տարեկան արձ. մէճ.	3½
» » վեցամսեայ	2
Կ. Պոլսոյ և այլ երկիրներու համար տարեկ.	4
վեցամսեայ	2½
Ազգ. վարժապետաներու համար իմմիր տարեկ.	2½
դուրսերու համար »	3

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՒ

Ա. Մամուլ կ'հրատարակէ նաև ձանուցումներ չափաւոր պայմաններով։

Ո և է նամակ, յօդուած ու դրուած ուղղեալ առ խմբագրութիւն ետ չեն դարձուիր։

Թէև Ա. Մամուլ ունի յատուկ դործակալները ի Կ. Պոլիս

Մեծ. Նշան Պէրպէրեան
61 Եուէլ Զապթիէ Ճադդեսի,
և
Մեծ. Յ. Հաննէսեան
Հէլվէկ խան — Կալաթա

որոց միջոցաւ կարելի է բաժանորդ դրուիլ և թերթերն առնալ, սակայն այն բաժանորդներն որ կ'փափաքին ուղղակի ընդունիլ իրենց թերթերն կարող են դիմել առ խմբագրութիւնս իրենց հասցէն որոշակի նշանակելով և միանգամայն տարեգլխին՝ Օսմանեան թղթադրոշմ ուղարկելով։

Մեր հասցէն,

Խմբագրութիւն ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼՈՅ — Իզմիր
Rédaction d'ARÉVÉLIAN MAMOUL —Smyrne.

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ

Օրինապէս երաշխաւորեալ բարձր կառավարութենէ ի ՀԱՄՊՈՒՐԿ

500,000

Մարք կամ

ՖՐԱՆԿ **625,000**

Իբրև մեծագոյն բաժին պիտի ընծայուին ամենէ երջանիկ շահողները նոր մեծ վիճակահանութենէն դրամագլխոց, Համպուրկի Կառավարութենէ երաշխաւորեալ։

Բայց ոևէ պարագայի մէջ

1	Պարգև, մարք	300.000
1	Բաժին, Մարք	200.000
1	» »	100.000
2	» »	75.000
1	» »	70.000
1	» »	65.000
1	» »	60.000
1	» »	55.000
2	» »	50.000
1	» »	40.000
5	» »	20.000
3	» »	15.000
26	» »	10.000
56	» »	5.000
106	» »	3.000
253	» »	2 000
6	» »	1.500
756	» »	1.000
1237	» »	500
33950	» »	148

18991 Բաժին մարք 300, 200, 150, 127, 100, 94, 67, 40, 20.

Դրամագլխոց ամենէ կարևոր վիճակահանութիւնն Համբուրգի բարձր Կառավարութենէ արտօնեալ և Պետութեան ամիսդջ կալուածոք երաշխաւորեալ կը պարունակէ 440,000 տոմսակ, որոց 55,400 ապահովապէս պիտի շահին, այս վիճակահանութեան մէջ դրմագլուխն է գրեթէ

13,000,000

ՖՐԱՆԿ ՈՍԿԻ

Այս դրամական վիճակահանութեան նպաստաւոր կարգադրութիւնն այնպէս կազմուած է որ ստորև նշանակուած ամեն 55400 գիներն ապահովապէս պիտի որոշուին 7 յաջորդական դասակարգի մէջ։

Առաջին դասակարգի գլխաւոր բաժինն է 50,000 մարք, երկրորդ կարգինը 55,000 մարք, որ երրորդին կ'բարձրանայ 60,000 մարքի, չորրորդին 65,000 մարք, հինգերորդին 70,000 մարք, վեցերորդին 75,000 մարք, և եօթերորդին 500,000, բայց ոևէ պարագայի մէջ 300,000, 200,000 մարք եւայլն։

Ստորև յիշուած առևտրական տունն յարգանօք կը հրաւիրէ ոյն գրավս մասնակցիլ այս մեծագումար վիճակահանութեան։

Այն անձինք որ կը փափաքին դրուիլ կը խնդրուին որ իրենց ընտրած տոմսակներուն դումարներն յղեն Ֆրանսայի Դրամատան դրամատոմսերով, կամ եւրոպական ըոևէ դրամատան, կամ առելի դիւրին պիտի լինի յղել ատուն միջազգային թղթատոմսական հրամանագրով, Ֆրանսական թղթատան թոշղթ,

Առաջին կարգի վիճակահանութեան գինն է

1	տոմսակ ամբողջ նախնական	ֆր. 7,50
1	կիսատոմսակ նախնական	» 3,75
1	քառորդ տոմսակ նախնական	» 1,90

Հետևեալ կարգերու տոմսակաց գինն ինչպես նաև տոմսի գիներու բաշխումն և վիճակահանութեան Թուականներն, վերջապէս ամեն մանր տեղեկութիւնները կարելի է գտնել պաշտօնական յայտագրին մէջ։

Ամեն ոք պիտի ընդունի նախնական տոմսակներն Պետական դրոշմով ինչպես նաև վիճակահանութեան պաշտօնական յայտագիրը, որու մէջ կ'երևի ամեն կարևոր մանրամասնութիւնք։ Վիճակահանութենէ անմիջապես ետք՝ ամեն շահակից պիտի ընդունի քաշուած պարգևներու պաշտօնական ցուցակը Պետական դրոշմով։ Բաժինները՝ յայտագրին նամակայն շուտով պիտի վճարուին՝ պետութեան երաշխաւորութեամբ, գիները վճարելի են Արեւելական մարքով։ Ամեն հաւանականութեան համար՝ եթէ երբեք վիճակահանութեան յայտագիրն շահակցի մը անյարմար թուի՝ պատրաստ ենք վիճակահանութենէ առաջ անյարմար դասուած տոմսակներն ետ առնուլ և ընդունուած դումարը հատուցանել։ փափաքողին կարող ենք կանխաւ յղել վիճակահանութեան պաշտօնական յայտագիրն ձրիապէս և տեղեկութիւն։ Կ'ազաչենք որ գրուելու փափաքողները համձին կարելի եղածին չափ շուտով ղրկել մեզ իրենց հրամանները բայց ոևէ պարագայի մէջ նախքան

30 Ապրիլ 1894 Ն. Տ.

ՎԱԼԱՆԴԷՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Դրամատուն ՀԱՄՊՈՒՐԿ

Ազատ Քաղաք, Գերմանիա

VII Mechitharistingas